30 ՅՈՒՆԻՍ 1998 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 116 (1619)

Azg

Azg armenian daily

Թուրք իշխանությունները չեն ճանաչում Մեսրոպ Սրբազանի ընտրությունը

Սամբուլի կառավարչի գրասենյակից հունիսի 22-ին ոստիկանության միջոցով Թուրքիո հայոց պատրիարքությանը հանձնված նամակում հայտարարվում է, որ չի վավերացվում վերջերս պատրիարքության կրոնական ժողովի կողմից Մեսրոպ արք. Մութաֆյանի պատրիարքական տեղապահ ընտրությունը եւ փոխարենը այդ պաշտոնում ճանաչում է Շահան արք. Սվաճյանին, նկատի ունենալով վերջինիս տարիքով ավագագույնը լինելու հանգամանքը: Այլ խոսքով, թուրքական իշխանությունները մերժում են պատրիարքության օրինական մարմնի օրինական ընտրությունը եւ փոխարենը նշանակում իրենց ցանկացած մարդուն:

Լուրը հաղորդող թուրք լրագրող Մենսուր Սկգյունը «Ենի Յուզյիլ» թերթում գրում է, որ սա Թուրքիո փոքրամասնությունների իրավունքների կողմից խախտում է եւ ավելացնում, թե այնքան ժամանակ, որ Թուրքիան չի հարգում մարդու եւ փոքրամասնությունների իրավունքները, «անկարելի պիտի լինի ձերբազատվել 1915 թ. դեպքերի լծից»:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայ-կանադական ոսկե հարսանիքը

ԱՐԻՍ ՂԱԶԻՆՅԱՆ

Այսօր, երբ դեռ թարմ է մեր հիշողության մեջ ՀՀ կառավարության այն խանդավառությունը, որով 1996-ին ստորագրվեց պայմանագիրը ՀՀ-ում ոսկու հանքերի շահագործման, վերամշակման եւ հարստացման մասին, պարզվում է, որ նման «խոստումնա-[illegible] պայմանագիրը աղճատ էր եւ [illegible] ամիս հետո ուղղակի չեղյալ կհայտարվի: Հիշեցնենք, որ պայմանագիրը ստորագրված էր ՀՀ կառավարության եւ կանադական «First Dynasty Mines» կազմակերպության միջեւ՝ 180 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Ըստ այդ պայմանագրի, շահագործվելիք հանքավայրերից էին Սոթքինը (24 մլն տոննա պաշարներով) եւ Մեղրաձորինը (1,7 մլն տոննա համարժեք ցուցանիշով): Նախատեսվում էր նաեւ կառուցել հարստացուցիչ-վերամշակող կոմբինատ, որտեղի արդյունահանվող հումքը չկտրի 240 կմ տարածք Արարատ հասնելու համար:

Այժմ պարզվում է, որ նշվածի գրեթե ամեն բան թերի էր. անփոփոխ է սոսկ կանադական կազմակերպության ներկայությունը եւ երկու հանքավայրերի տեղադրությունը: Պարզվում է, որ հայրենական հետազոտությունները աղճատիչ չափով սխալ էին, պարզողը ավստրալական «Snowden» կազմակերպությունն է, որի հետազոտական գործունեության արդյունքները հետեւյալն են. Սոթքի պաշարները՝ ընդամենը 6,2 մլն տոննա (4,5 տոննա մակերեւութային եւ 1,7 ստորգետնյա), Մեղրաձոր՝ ընդամենը՝ 0,8 տոննա: Բացի այդ, ինչի՞ է նման ՀՀ կառավարության, այլ ոչ թե գործի մեջ զբաղվող կոնկրետ ձեռնարկության («Հայոսկի») կնիքով ստորագրված պայմանագիրը:

Եվ ահա (հունիսի 23-ի լույս 24-ի գիշերը) կնքվում է նոր մի պայմանագիր, արդեն «Հայոսկու» եւ նույն՝ «First Dynasty Mines»-ի միջեւ, եւ այդ նշանակալից իրադարձության առթիվ երեկ, հունիսի 29-ին ՀՀ կառավարությունում հրավիրված էր մամուլի ասուլիս: Այն վարում էին ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարի առաջին տեղակալ Սովսեպ Ղազարյանը, նախարարի խորհրդական Վարդան Վարդանյանը եւ նախարարի իրավական հարցերով խորհրդական Կարեն Մանուկյանը: Նրանց խոսքի ամփոփումը հետեւյալն է. տվյալ պայմանագիրը շատ ավելի փոխշահավետ է նախկինի համեմատ. նախ ՀՀ կառավարությունը չի կրի (փոխարենը «Հայոսկին») որեւէ պատասխանատվություն ծախողման պատճառով: Բացի այդ, ինչպես նշեց Նորվեգս Ղազարյանը, «Ինչպես անմն ամուսնություն ենթադրում է բաժանում, այդպես էլ այս պայմանագիրը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում հրաժարվել միմյանցից»: Սա նշվեց իբրեւ կարեւորագույն ձեռքբերում, եւ ընդհանուր առմամբ հենց այս ձեռքբերումային երանգով էր ներծծված ողջ ասուլիսը:

Ձեռքբերումները նշվածից բացի հետեւյալն են. շահագործման առաջին երեք տարիների ընթացքում շահույթը բաշխվելու է. 70 տոկոսը կանադական կազմակերպությանը, 30 տոկոսը՝ «Հայոսկուն»: Երեք տարի անց՝ շահագործման երկրորդ փուլում, այդ ցուցանիշը կազմելու է արդեն 50/50: Տարեկան արդյունահանվելու է 790 հազար տոննա հանքանյութ, որը տեղափոխվելու է Արարատ, առավելագույնը 4 դոլարով 1 տոննայի դիմաց: Սա տարեկան կազմելու է շուրջ 30 մլն դոլար ծախս: Նշենք, որ նոր գործարքի գինը 180-ից նվազել է 65–70 մլն դոլարի: Ու թեեւ այսօր ոսկու արդյունահանումը շահավետ գործ չէ (միայն վերջին երկու տարիներին ոսկու ունցիայի գինը 450 դոլարից նվազել է 280 դոլարի), այնուամենայնիվ, պայմանագիրը խոստանում է 170 մլն դոլարի չափով շահույթ:

Թվում է, թե տեսականորեն արհեստավարժների հեռանալուց հետո նոր գործադիրները ձեռնամուխ կլինեն նոր պայմանագրի մշակմանը (համեմատ շահավետ), բանզի հինը բնավ չխոչընդոտեց, որ երկու տարի շարունակ հայկական ոսկին հին պայմանագրի սկզբունքներով արտահանվի:

ԵՐԵՎԱՆ

Պաշտպանության նախարարության ֆինվարչության պետն՝ ինքնասպան

ՊՆ հայտարարությունը բացում է որոշ մանրամասներ



Կիրակի օրը Երեւանում ինքնասպանություն է գործել Հայաստանի պաշտպանության նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետ գնդապետ Սավրիկ Ավետիսյանը: Նա 53 տարեկան էր եւ այդ պաշտոնում է գտնվում 1992 թվականի հունվարից: Տակավին հայտնի չեն ինքնասպանության դրդապատճառները:

Գնդապետը ծնվել է 1945 թվականին Սոչիսակի շրջանի Սարահարթ գյուղում: 1964 թ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը, մեկնել է բանակ, 1967 թ. զորացրվել: 1971 թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, վարել դասախոսական աշխատանք ԵՊՀ-ում: 1973 թ. աշխատել է Հայկական ԽՍՀ նախարարությունում որպես ավագ ֆինանսիստ, ֆինանսական բաժնի պետի տեղակալ, իսկ 1983-92 թթ. ֆինբաժնի պետ: ՀՀ նախագահի 1996 թ. սեպտեմբերի 20-ի հրամանագրով պարգեւատրվել էր «Մարտական ծառայության համար» մեդալով: Ամուսնացած էր եւ երեք երեխայի հայր:

Երեկ երեկոյան ՀՀ ռազմական գերատեսչության մամուլի ծառայությունը տարածել է հայտարարություն դեպքի առիթով:

ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում իրականացվում է իրավախախտումների, չարաշահումների, հափշտակությունների դեմ պայքարի լայնածավալ ծրագիր: Արդեն իսկ պատասխանատվության են ենթարկվել տասնյակ պաշտոնատար անձինք, վերականգնվում են պետությանը հասցված վնասները: Ս. թ. հունիսի սկզբին ՀՀ զինվորական դատախազության կողմից պաշտպանության նախարարի միջնորդությամբ, պետք է ստուգվեր ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության գործունեությունը: Սակայն տարբեր պատճառաբանություններով վարչության պետ Ս. Ավետիսյանը ձգձգել է պահանջվող հաշվետվությունների եւ տվյալների ներկայացումը: Անմիջական ստուգումները նախատեսված էր սկսել հունիսի 29-ին: Ստուգումներից մեկ օր առաջ, հունիսի 28-ին, կիրակի օրը, ժամը 11:30-ին, աշխատասենյակում ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ Ս. Ավետիսյանն իրեն ամրացրած ատրճանակով ինքնասպան է եղել: Գործը գտնվում է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր կարեւորագույն գործերով քննիչի վարույթում, ասվում է ՊՆ հաղորդագրության մեջ:

ՀԱՄԱՌՈՏ

Ժերար Էրրան փոխարինեց Ժակ Բլոյին

ԲԱԲՈՒ, 29 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի ղեկավար կառույցում տեղի են ունեցել փոփոխություններ: Ինչպես հաղորդում է ANS-press գործակալությունը, վկայակոչելով հավաստի աղբյուրներ, Ֆրանսիայից ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի համանախագահ Ժակ Բլոն ազատվել է զբաղեցրած պաշտոնից իր լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ: Այդ նույն աղբյուրի համաձայն, Ժ. Բլոյի ժառանգորդն է դարձել Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ժերար Էրրեան:

Իգոր Սերգեեւի այցը Հայաստան հետաձգված է

Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար ՌԴ մարշալ Իգոր Սերգեեւի պաշտոնական այցը Հայաստան հետաձգված է: Դա մասին երեկ մեզ հայտնեցին Երեւանում ռուսաստանյան ռազմական աղբյուրները: Այցի հետաձգումը պայմանավորված է նախարարի զբաղվածությամբ եւ ՌԴ պետական ատյանների գործունեությանը մասնակցությամբ: Մարշալը Հայաստան կայցելի ամսվա կեսերին, նշեց աղբյուրը:

Տ. ԼԻԼՈՅԱՆ

Հայկական օդանավերի մուտքը Հնդկաստան

Այսուհետ Երեւանը տարանցիկ կետ Եվրոպայի եւ Հնդկաստանի միջեւ

Հունիսի 26-ին «Հայկական ավիաուղիներ» ավիաընկերությունը Իլ-86 օդանավով առաջին անգամ շահագործեց Երեւան-Դելի-Երեւան կանոնավոր ուղիղ չվերթը: Անդրանիկ չվերթին հրավիրյալի կարգավիճակով մասնակցում էին նաեւ կառավարության, ԱԳ նախարարության, քաղաքացիական ավիացիայի եւ «Հայկական ավիաուղիների» պատասխանատուներ, ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանը, Հնդկաստան-Հայաստան ընկերության նախագահ, Հնդկաստանում ՀՀ պատվո հյուպատոս Հովսեփ Սեֆերյանը, լրագրողներ եւ 50 ուղեւորներ:

Կարեւորելով չվերթի շահագործումը, «Հայկական ավիաուղիների» գլխավոր տնօրեն Տիգրան Այոյանը տեղեկացրեց, որ այն առանձնահատուկ նշանակություն ունի: Երեւան-Դելի-Երեւան չվերթի հիմնական նպատակը ոչ միայն երկու կետերի միջեւ զուտ ուղեւորափոխադրում իրականացնելն է, այլեւ միջնորդավորված տարանցիկ ճանապարհով ուղեւորներ տեղափոխելը: Երկարատեւ բանակցությունների վերջնարդյունքում իրավունք է վերապահվել Դելիից Հայաստանով ուղեւորներ փոխադրել մեկ այլ երկիր: Այսօրինակ ցանցի իրականացումը սկիզբ դրվեց դեռեւս նախորդ տարի, որի առաջին փորձը կատարվեց Երեւան-Լոնդոն-Երեւան չվերթի բացմամբ: Չվերթի համակցմամբ, ըստ էության, շաբաթական երկու անգամ կիրականացվեն Դելի-Լոնդոն չվերթերը: Այսուհետ ոչ միայն Լոնդոնից, այլեւ ցանկացած այն երկրներից, ուր ՀԱՈՒ-ն չվերթեր է կատարում, ուղեւորները կարող են տարանցիկ, Հայաստանով տեղափոխվել մեկ այլ երկիր:

Տես էջ 3

ՇԻՐԱԿ

Փոքրկի ու կարկուտի դեմ անպաշտպան

Ինչպես արդեն հաղորդվել է, ուրբաթ ուշ երեկոյան մոլեգնած ուժեղ քամին եւ կարկուտը նյութական մեծ վնաս ու ավերածություններ են պատճառել Շիրակի մարզի Արթիկ, Մարալիկ քաղաքներին եւ այդ ենթաշրջանների բազմաթիվ գյուղերի: Անակնկալ սկսված քամին ու պտտահողմը պոկել են շատ շենքերի ու սեփական տների տանիքներ, կոտրել ադակ, ներ, ծառերի ճյուղեր, խոնարհել էլեկտրասյուներ եւ կտրել էլեկտրահաղորդման գծեր: Արթիկի տարածաշրջանի Պեմզաշեն գյուղում վնասվածքներ են ստացել 4 բնակիչներ, որոնցից մեկին վիրաբուժական օգնություն է ցուցաբերվել: Շուրջ 16 տոննա տեւած անստվոր խոշոր կարկուտը հատկապես մեծ վնաս է հասցրել գյուղատնտեսական ցանքատարածություններին: Աղեղից կարճ ժամանակ անց ենթաշրջան է այցելել Շիրակի մարզպետը, իսկ հաջորդ օրը ՀՀ տարածքային կառավարման նախարար Դավիթ Զադոյանը մի խումբ մասնագետների հետ: Ստեղծված մարզային հանձնաժողովը գործուն աշխատանք է կատարում տեղերում վնասների չափերը ճշտելու ուղղությամբ, որպեսզի հանրապետական հանձնաժողովը հարցը մտցնի կառավարության հուլիսի 2-ի նիստի օրակարգ: Տուժած բնակավայրերին ու բնակիչներին հնարավոր օգնություն կազմակերպելու համար: Միաժամանակ օպերատիվ աշխատանքներ են կատարվելու վնասված էներգետիկ ու կապի համակարգերի վերականգնման, առավել տուժած ընտանիքներին, կրթական եւ այլ օբյեկտներին ձեռքի տակ եղած միջոցներով, ջինանյութերով օգնելու:

Չորրորդ տարին է, ինչ Շիրակի մարզի տարբեր գյուղեր տուժում են բնական աղետներից, իսկ միայն այս տարվա ընթացքում սա կարկտահարության արդեն երրորդ դեպքն է: Եվ մարդիկ անընդհատ հարցնում են, թե ժամանակը չէ՞ վերականգնելու մարզի տարբեր հատվածներում նախկինում գործող հակակարկտային ծառայությունը:

Գ. Ս.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՐՊԱՅԻՆ

ՀՀ նախագահի հրամանագրով ԱԺ-ն գումարեց արտահերթ նստաշրջան, օրակարգում ունենալով 20 հարց, որոնց թվում, սակայն, չկար այն, ինչին սպասում էր խորհրդարանի ընդդիմադիր հատվածը՝ էդվարդ Եգորյանի, Արշակ Սադոյանի եւ Խորեն Սարգսյանի եռանախագահությամբ «Կոնյակը» Նիստը բացվեց Արշակ Սադոյանի վիրավորված ելույթով ՀՀ նախագահը խախտում է օրենքը՝ հրաժարվելով գումարել ԱԺ 66 պատգամավորների ստորագրությամբ ամրագրվող նստաշրջանը, ուր դարձյալ պետք է քննարկվեր սեփականաշնորհված «Կոնյակի» գործարանի ճակատագիրը: ԱԺ ղեկավարությունը Արշակ Սադոյանին առաջարկեց դիմել Սահմանադրական դատարան, ի պատասխան «Կոնյակի» ընդդիմությունն առաջարկեց չգրանցվել եւ բոյկոտել նախագահի հրավիրած նիստը: Բայց 93 պատգամավոր արդեն գրանցված էր, ու բոյկոտը չկայացավ: Այսօր տեղի կունենա մեր եռանախագահության ճեպագրույցը, որի ընթացքում կպարզաբանվի սեփականաշնորհված գործարանի հանդեպ ԱԺ-ի որդեգրելիք դիրքորոշումը, կիզակետում հուլիսի 3-ին ծրագրված հանրահավաքը՝ թե:

Խաղաստներն ամսական վճարում են իրենց մեկ օրվա շահույթի չափ հարկ

Արձանագրեց ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար էդվարդ Սանդոյանը՝ ներկայացնելով «Հաստատագրված վճարների մասին» օրենքի նախագիծը՝ անմիջապես ավելացնելով, թե կառավարությունը կատարում է միայն առաջին քայլը՝ պահանջելով վճարել... 1,5 օրվա շահույթը: Հաստատագրված վճարների համակարգը Հայաստանում արդեն գործում է, բայց կառավարությունը որոշել է օրենսդրորեն կարգավորել հարկման այս պարզագույն, բայց այսօր անհրաժեշտ եղանակը: Այսուհետ հաստատագրված վճար կգանձվի խանութների, կրպակ-տաղավարների միջոցով իրականացվող առեւտրային գործունեությունից, տնավաճառներից եւ շուկաներից, հանրային սննդի ոլորտից, ավտոտրանսպորտային գործունեությունից, վարսահարդար ծառայություններից, ավտոտեխսպասարկման կայաններից, լուսանկարչատներից, բենզինի եւ դիզվառելիքի մանրածախ վաճառքից, ավտոկանգառներից, արդյունագործական ձկնորսությունից, արտարժույթի փոխանակման կետերից, խաղատներից եւ խաղային ավտոմատների շահագործումից, տեսաժապավենների ու տեսամագնիտոֆոնների վարձույթից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Վիրաբուժական միջամտություն» տնավաճառներում եւ խաղատներում

Կառավարությունն առաջարկում է 708 մլն դրամ հաստատագրված վճարներից

«Ազգն» արդեն գրել է ֆինէկոնոմ նախարարությունում մշակված օրենքի տարբերակի մասին, որի շնորհիվ բյուջեն կստանար 0,4 մլրդ դրամ, սակայն, ինչպես պարզաբանեց էդ. Սանդոյանը, ԱԺ քննարկումների ընթացքում կառավարությունը մասամբ իջեցրել է օրենքով սահմանվելիք դրույքաչափերը: Հաստատագրված վճարների գործող համակարգի պայմաններում կարելի է ակնկալել 4 մլրդ դրամի եկամուտներ, հաստատագրված վճարների նոր օրենքով, եթե այն սկսի գործել օգոստոսի 1-ից ՀՀ պետբյուջեի եկամուտները կավելանան հավելյալ 708 մլն դրամով:

Մինչեւ 30 քմ առեւտրային մակերես ունեցող խանութների, կրպակ-տաղավարների միջոցով իրականացվող առեւտրական գործունեության համար առաջարկվում է դրույքաչափերի 25 տոկոս բարձրացում, Երեւանի որոշ գոտիներում՝ մինչեւ 76 տոկոս բարձրացման հնարավորությամբ: Հաստատագրված վճար մուծողների ցանկից դուրս կգան կրպակների միջոցով թերթի եւ ամսագրի վաճառքն ու հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառող հարկատուները: Եթե եռամսյակային շրջանառության չափը գերազանցում է 250 հազար դրամը՝ առեւտրական տարածքի 1 քմ-ի հաշվով, ապա հաստատագրված վճարողն անցնում է սովորական հարկային մեխանիզմի: Նկուղներում տեղաբաշխված խանութներից գանձվող հաստատագրված վճարները մնում են անփոփոխ:

Հանրային սննդի ոլորտում դրույքաչափերը կբարձրանան 30 տոկոսով, սեզոնային վայրերում ապրիլ-հոկտեմբեր ամիսներին 56 տոկոսով: Եթե եռամսյակային շրջանառությունը 1 քմ հաշվով գերազանցի 200 հազարը, ապա դարձյալ հարկատուն պետք է անցնի սովորական կարգով՝ ԱԱՀ, շահութահարկ եւ եկամտահարկ վճարելուն:

Օրինագծի աղը խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարների գանձումն է: Խաղատները վճարելու են խաղասեղանների թվով: Ներկայումս գործող դրույքաչափը մեկ խաղասեղանի համար ավելանում է 16 անգամ՝ ծայրագավառների համար, իսկ Երեւանի պարագայում մինչեւ 27 անգամ: Յուրաքանչյուր սեղանից 1800 կամ քաղաքի կենտրոնում՝ 2,5 հազար դոլար:

Հարկային քաղաքականության գարշապարը բենզինի կամ դիզվառելիքի մանրածախ վաճառքի կետերն են, ըստ այդմ՝ բենզալցման յուրաքանչյուր խողովակի հաշվով պետությունը պետք է գանձի 1000 դրամ: Տնավաճառներից, շուկաներից ամսական միջինը կգանձվի 1068 դոլար՝ նախկին 855-ի դիմաց: Մեկ կրպակից, դիցուք, Շենգավիթում՝ 3800 դրամ, կենտրոնում՝ փոքրինչ ավելի:

Սոցիալական վտանգներ

Պատգամավորների հիմնական մասը, ինչպես նաեւ ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի նախագահ Արմեն Եղիազարյանն արձանագրեցին, թե մանրածախ առեւտրի կետերը Հայաստանում աշխատանքով են ապահովում բնակչության մի սվար զանգվածի: Վիրաբուժական ցանկացած միջամտություն հղի է լուրջ վտանգներով: Եթե կառավարությունը հաստատագրված վճարներ սահմանելիս, հաշվի առնելով 28 տոկոս սղաճը, ապա հարկային բեռը կավելանա 0,6 տոկոսով, ինչի արդյունքում սպառողական գները կավելանան 0,6 տոկոսով, դա որոշակի ազդեցություն կգործի բնակչության եկամուտների վրա: Բայց հաստատագրված վճարների սկզբունքի կիրառումն այլընտրանք չունի թե էդ. Սանդոյանի, թե Ա. Եղիազարյանի հաշվարկներով գների լուրջ բարձրացում տեղի չի ունենա, ամենակարեւորն այն է, որ կհաղթի հետեւյալ սկզբունքը. «Ընդհանրապես հարկ չվճարելուց որոշ հարկատուներ կսկսեն քիչ, բայց կայուն հարկ վճարել»: Մեր կողմից հավելենք՝ Հռոմը միանգամից չի կառուցվել: Այսօր քննարկումը կշարունակվի:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՇԻՐԱԿ

Շարք մտավ լոկոմոտիվների նորոգման նոր արտադրամասը

երկաթուղային տրանսպորտի անխափան աշխատանքը շատ բանով վճռորոշ է մնում Հայաստանի կյանքի, նրա տնտեսության զարգացման համար: Շարժակազմերի անխափան աշխատանքին կծառայի Գյումրիի լոկոմոտիվային դեպոյում շարք մտած նորոգման նոր արտադրամասը, որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ կիրակի օրը՝ հունիսի 28-ին: Այս առիթով Գյումրի էին ժամանել ՀՀ տրանսպորտի նախարար Երվանդ Զախարյանը, Հայաստանի երկաթուղու վարչության պետ Վլադիմիր Ասրիյանցը, այլ պաշտոնատար անձինք: Նախարար պրն Զախարյանը, Շիրակի մարզպետ Արարատ Գոմցյանը բացմանը հավաքված դեպոյականներին շնորհավորելով շուրջ ութ տարի առաջ սկսված շինարարության ավարտի եւ նորամուտի առթիվ, նրանց հաջողություն մաղթեցին աշխատանքային հին ու հարուստ ավանդույթները շարունակելու գործում:

Անհրաժեշտ հարմարություններով, նոր ամբարձիչ եւ այլ տեխնիկայով օժտված ընդարձակ արտադրամասը նախատեսված է լոկոմոտիվների ընթացիկ նորոգումների համար: Ինչպես տեղեկացրեց դեպոյի գլխավոր ինժեներ Լ. Մուրադյանը, այստեղ օրական կարելի կլինի նորոգել 4 էլեկտրաքարշ: Կիրականացվեն նաեւ բարձրացումային եւ անվազույգերի նորոգման աշխատանքներ: Դա կապահովի ամբողջ Հայաստանի լոկոմոտիվների ընթացիկ նորոգումը, ինչպես եւ դրսից պատվերներ ընդունելու հնարավորություն: Ազատված հին մասնաշենքը կտրամադրվի հիմնական նորոգումներին:

Գ. Մ.

Դոլարի փոխարժեքի անկումը երկար չի տեւի

ԵՐԵՎԱՆ, 29 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Անցած շաբաթ դիտվեց ԱՄՆ-ի դոլարի փոխարժեքի համեմատաբար մեծ նվազում՝ մոտ 0,5 տոկոսով: Դա արտահայտվեց նաեւ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվող փոխարժեքի վրա, որն անցյալ շաբաթվա սկզբի համեմատ նվազել է 0,92 կետով եւ հասել է 502,04 դրամի՝ 1 դոլարի դիմաց: Այս երեւույթը, ըստ ԿԲ-ի ֆինանսական գործառնությունների վարչության պետ Արման Վարդանյանի, կրում է զուտ սեզոնային բնույթ: Բնակչությունը մեծաքանակ գնումներ է կատարում շուկայում մրգերի պահածոյացման նպատակով, ինչը ավելացնում է դրամի պահանջարկը: Դոլարի փոխարժեքը, ըստ պրն. Վարդանյանի, մեծ անկում չի ունենա եւ բավական արագ կվերականգնվի:

Վանաձոր. Խանութներ՝ շենքերը խարխլելու գնով

ՎԱՆԱՁՈՐ, 29 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վանաձորի շենքերի առաջին հարկերում զանգվածային ծավալներ են սանում բնակելի տները վաճառասների վերածելու դեպքերը: Թե քաղաքի կենտրոնական եւ, թե ավելի հեռու գտնվող թաղամասերում տարեցայտորեն առաջ եկող այդ խանութները կառուցվում են քաղաքաշինական եւ ճարտարապետական նորմերի խախտումներով՝ առաջացնելով քաղաքային հոսանության համապատասխան մարմինների տագնապը: Բանն այն է, որ 1988 թ. երկրաշարժը տեսած քաղաքի շատ շինություններում լրացուցիչ բացվածքներ են անում, քանդում են պատեր, որոնց արդյունքում այդ վերափոխված կառույցների ամրության եւ սեյսմակայունության հարցն առավել քան լուրջ անհանգստության պատճառ է:

6 տարվա ընդմիջումից հետո ադարանցիները բնական գազ են օգտագործում

ԱՇՏԱՐԱԿ, 29 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բնական գազով նորից կապահովվեն Ադարանի մի քանի բնակարաններ: Ադարանի գազի ծառայության պետ Վ. Ավետիսյանը հայտնեց, որ ծառայությունն անցյալ տարվանից է սկսել քաղաքի գազամատակարարման ուղղությամբ տարվող աշխատանքները: Նախատեսված էր մինչեւ ծմեռ բնակչության մի մասին ապահովել բնական գազով, սակայն հաշվիչներ չլինելու, ցանցի վերանորոգման հետ կապված դժվարությունների պատճառով դա հնարավոր չեղավ: Այս տարի նոր թափով վերսկսվեցին աշխատանքները, եւ ահա, շուրջ 6 տարվա ընդմիջումից հետո Ադարանում նորից վառվեց երկնագույն գազը: Նախատեսված է մինչեւ տարեվերջ գազիֆիկացնել 500 բնակարան:

ԽԱԽՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԻԺ

Էդ. Սանդոյան. «Բոլորը կրելու են ամենալուրջ պատասխանատվություն»

Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության վերահսկողական ծառայությունը, որը ղեկավարում է Լեւոն Կարապետյանը, արդեն տեւական ժամանակ է, ինչ ստուգումներ է անցկացնում բյուջետային հիմնարկություններում, այսինքն՝ տարբեր նախարարություններում եւ մարզպետարաններում՝ ստուգելու բյուջետային միջոցների ծախսման օրինականությունը: Ընդգրկման ժամկետը բավական մեծ է՝ սկսած 93-94 թթ. մինչեւ այսօր: Հունիսի 25-ին կառավարությունում տեղի է ունեցել նիստ՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, որի ընթացքում Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության վերահսկողական ստորաբաժանումը ներկայացրել է իր ուսումնասիրության արդյունքները, որոնք վկայում են, թե տարիներ շարունակ մի շարք նախարարություններում եւ գրեթե բոլոր մարզպետարաններում կատարվել են բյուջետային միջոցների յուրացումներ՝ կեղծ փաստաթղթերի հիման վրա: Նախագահի անմիջական հրահանգով ստեղծվել է հատուկ խումբ՝ ՀՀ դատախազության, ՆԳ եւ ԱԱ, Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունների աշխատակիցներից կազմված, որոնք բացահայտվող հափշտակումները հասցնելու են տրամաբանական ավարտին՝ դատարան: Կիրակի կատարվեց մի դեպք, որն այս ստուգումների տրամաբանության հետ յուրովի է առնչվում, պաշտպանության նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետ Մավր Ավետիսյանն ինքնասպանություն գործեց: Հավատի հայտնի է միայն, որ այս նախարարությունում եւս պետք է շարունակվեին ֆինանսատնտեսական գործունեության ստուգումները: «Ազգ»-ը դիմեց Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար էդվարդ Սանդոյանին պարզաբանման ակնկալիքով:

– Կառավարության խնդիրներից մեկը բյուջետային կարգապահության բարձրացումն է, բյուջետային ծախսումների նկատմամբ վերահսկողության ուժեղացումը: Բյուջետային ծախսումների բնագավառում թույլ տրված խախտումների համար բոլորը պատժվելու են եւ կրելու են ամենալուրջ պատասխանատվություն: Սա մեր ոչ թե ընթացիկ, այլ ռազմավարական խնդիրներից է: Եթե ինչ-որ մեկը բյուջեի միջոցների հաշվին, այսպես ասած, անօրինական եկամուտներ է ձեռք բերել, ինչքան էլ տարիներ անցած լինեն, մենք պետք է հայտնաբերենք եւ պատժենք: Այդ խնդրով էլ հիմա զբաղված ենք: Մեր նախարարության խնդիրը հարցի ֆինանսատնտեսական կողմի բացահայտումն է, այդ փաստերը ներկայացնելու ենք դատախազությանը, ՆԳ եւ ԱԱ նախարարությանը, որն էլ խնդրի քրեական ծեւակերպումը կա:

– Պն ֆինանսաբյուջետային վարչության պետի ինքնասպանությունը կարելի՞ է համարել ուղղակի հետեւանք այս ստուգումների:

– Ես դեռ նման ոչինչ չեմ կարող ասել: Հետաքրքրվեք պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից:

Ինչ որ կեղծ է եղել բյուջեի հետ հարաբերություններում, մենք բոլորը բացահայտելու ենք, ամփոփեց ժամանակի նախարարը:

Ն. Դ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Հաճախորդային ծառայություն / 581841
Apple Macintosh
հաճախորդային շարուածը «Ազգ» թերթի
Յողումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՄԲԱԳԻԿ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Պատուհան դեպի Եվրոպա

Խ. Հարությունյանը կընդունի Ֆրանսիայի ու Արգենտինայի պատվիրակներին

Հունիսի առաջին կեսին՝ 12-13-ին՝ Ստոկհոլմում ԱԺ խոսնակ Խորով Հարությունյանը մասնակցեց Եվրոպական խորհրդարանական վեհաժողովների խոսնակների համաժողովին՝ թեման հավերժական էր. «Ընդլայնվող ժողովրդավարական Եվրոպայի պայմաններում ազգային խորհրդարանների առջեւ ծառացող խնդիրները»: Զեկուցողը Ավստրիայի խորհրդարանի նախագահ Հայնց Ֆիշերն էր: ԱԺ խոսնակ Խորով Հարությունյանն իր ելույթում մանրամասնել է Եվրախորհրդին անդամակցելու Հայաստանի օրենսդիրների խնդիրը: Հանդիպում է տեղի ունեցել նաեւ Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լենի Ֆիշերի հետ, հայտնեց Խորով Հարությունյանի խորհրդական Վիգեն Սարգսյանը՝ երեկ ԱԺ-ում տեղի ունեցած ճեղազրույցում: Հունիսի 14-17-ը ԱԺ խոսնակի գլխավորած պատվիրակությունը ժամանել է Սանկտ Պետերբուրգ՝ մասնակցելով արդեն ԱՊՀ միջխորհրդարանական միջոցառումներին: Հունիսի 17-ին սկսվել է երկրորդ պետերբուրգյան տնտեսական խորհրդաժողովը, իսկ մինչ այդ ԱՊՀ ՄՎ խորհրդի եւ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի բյուրոյի համատեղ նիստն էր: Հունիսի 22-ին ԱԺ պատվիրակությունը Բուխարեստում մասնակցել է Սեւծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովի աշխատանքներին: Հունիսի 23-ին Ռումինիայի արտգործնախարարի հետ հանդիպումն էր, իսկ հունիսի 24-ին Աթենքում կարճատեւ այց հունական խորհրդարանի նախագահ Սպոսդոլոս Կակլամանիսի հետ: Թեժ բանակցային հունիս հայ խորհրդարանականների համար:

Միով բանիվ, հունիսի կեսը ԱԺ պատվիրակությունն անցկացրել է արտագնա միջխորհրդարանական ֆիումներում, որի գինը՝ առանց տոմսերի արժեքի 2.5 հազար դոլար է, պարզաբանեց Վիգեն Սարգսյանը՝ չմոռանալով նշել, թե այս ծախսերը կատարվել են ԱԺ-ին հատկացված բյուջետային միջոցների հաշվին:

Այսօր սկսվում է տեղական ընտրությունների ժամանակը. Ֆրանսիայի Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության պատգամավորական խմբի պատվիրակությունը կհանդիպի հայ խորհրդարանականներին: Սենատի նախագահ Ռենեն Ռոյերի գլխավորությամբ հայ խորհրդարանականները կողմնահարգենում կմասնակցեն ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նիստին, որը տեղի կունենա Կոտովոյում ստեղծված իրավիճակը, ինչպես նաեւ ԵԱՀԿ կառույցների զարգացումն ու հեռանկարը:

Ե. Դ.

Ոչ ոքի

Այսօր, հունիսի 30-ին, Հայաստան է ժամանում Արգենտինայի Հանրապետության նախագահ Կարլոս Մենեմը: Արծաթային երկրի (արգենտում-արծաթ) ղեկավարը պաշտոնական հանդիպում կունենա ՀՀ նախագահի, ինչպես նաեւ այլ պաշտոնյաների հետ: Չի բացառվում, որ այսօր կնքվի տնտեսական համագործակցության պայմանագիր, որի նախագիծը արդեն իսկ մշակված է հայաստանյան կողմից: Նման հնարավոր համագործակցությունը պայմանավորող գործոններից է նաեւ այն, որ ներկայումս Արգենտինայում բնակվում է շուրջ 70 հազարանոց հայություն, որի ներկայացուցիչներից շատերը զբաղված են տնտեսության մեջ՝ տիրապետելով ազդեցիկ լծակների եւ մեծ հնարավորությունների:

Հունիսի 27-ից արդեն Հայաստանում է արգենտինահայ գաղութի ներկայացուցիչների պատվիրակությունը՝ հայ-արգենտինական առեւտրաարդյունաբերական պալատի եւ առեւտրականների միության նախագահ Մանվել Արալանյանի ղեկավարությամբ: Երեկ պատվիրակությունը հանդիպեց Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության ներկայացուցիչների հետ, որի նպատակն էր ծանոթանալ մեր հանրապետության տնտեսական իրավիճակին եւ հնարավոր հետագա հեռանկարներին: Մանվել Արալանյանը նշեց, որ «մեր հասարակությունը ցանկանում է արձագանքել եւ նպաստել ՀՀ տնտեսական բարգավաճմանն ու զարգացմանը: Իհարկե, մենք չենք եկել բոլոր հարցերը լուծելու, սա բարդ եւ բազմակողմանի խնդիր է: Մենք եկել ենք ինչ-որ ձեւով աջակցելու այդ գործընթացին»:

Պարոն Արալանյանը հարկ համարեց հատուկ ընդգծել նաեւ Արգենտինայի կառավարության ուշադրությունը այս հարցի նկատմամբ, փաստելով, որ իրենց շարքերում է նաեւ արտգործնախարարության երկկողմ տնտեսական համագործակցության բաժնի ղեկավարը:

Հայաստանի գործարարների եւ արդյունաբերողների միության նախագահ Արամ Վարդանյանի կարծիքով, թեեւ մեր երկրները բավականին հեռու են, սակայն երբեմն ցուցաբերվի համաձայնասխան կամք եւ ցանկություն, արդա համագործակցությունը կկայանա. «Մեր կողմից պատրաստվել է պայմանագրի նախագիծ՝ ստորագրելու համար: Ինչպիսի համագործակցություն կա քաղաքական ոլորտում, կուզենք որ նույնը լինի նաեւ տնտեսական բնագավառում»: Ենթադրվում է, որ համագործակցության առավել նախանշվող ուղղություններից են տեքստիլ արդյունաբերությունը, հրաստարակչական գործը, ագրոբիզնեսը եւ կոկեղեցի արտադրությունը: Ըստ այդմ էլ հայաստանցի գործարարներից հանդիպմանը մասնակցում էին «Հայգորգ», Երեւանի կոշիկի «Լյուս», Գյումրիի տեքստիլ գործարանի, Արտաշատի ոգեաիծոների գործարանի եւ ՍԻԼ կոնցեռնի ղեկավարները:

Արգենտինացի գործարարները երեկ, կեսօրից հետո, դեռ ծանոթ չլինելով պայմանագրի սարքագծի բովանդակությանը, հանգի այդ ժամերին նախագծի տեքստը բարգմանվում էր իսպաներեն: Երեկոյան կողմերն արդեն անդայման ընդունած կլինեն նախագծի դրույթները եւ հավանության դեմքում, այսօր կստորագրվի տնտեսական համագործակցության մասին հայ-արգենտինական պայմանագիրը:

Ա. Ղ.

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐԳԵՆՏԻՆԱ

Նախատեսվում է ստորագրել տնտեսական պայմանագիր

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ստի ոտքերը կարճ են

Հունիսի 26-ին «Ազգ» թերթում տպագրված «Բաց նամակ «Ազգի» խմբագրին» հրապարակումը, որն առնչվում է օրերս ԼՂՀ ԱԳՆ-ում կայացած հանդիպմանը ԶԼՄ-ի ներկայացուցիչների հետ, սկզբում որոշեցի թողնել անպատասխան: Սակայն տվյալ պարագայում խոսքը ոչ այնքան տողերիս հեղինակի պատվի, որքան ԼՂՀ-ում ազատ մամուլի, 4-րդ իշխանության կայացման, ավելի ճիշտ՝ կայանալու բազմաշերտ փորձերի մասին է: Այսօր Ղարաբաղում մամուլի մի շարք ներկայացուցիչներ իրոք ծանր պայքար են մղում մամուլն ազատ տեսնելու... ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի եւ ԼՂՀ ՊՆ Սամվել Բաբայանի կոչ-ցանկությունն իրականացնելու համար: Բայց պարզվում է, որ բոլոր իշխանավորներն ու լրագրողները չեն պատրաստ մամուլի ազատությանը:

Հունիսի 23-ին ԼՂՀ ԱԳՆ-ում տեղի է ունեցել արտգործնախարար Նաիրա Մելքումյանի հանդիպումը 9 լրագրողների հետ: (Նշենք, որ ԼՂՀ-ում լրագրողների թիվը հասնում է մի քանի տասնյակի): Նախարարը իրոք ցանկություն հայտնեց չլուսաբանված տեսնել այն: Ընդգծում եմ. չլուսաբանելու մասին պայմանավորվածություն համենայն դեպս տողերիս հեղինակի հետ չկար: Կար ընդամենը նախարարի ցանկություն, որին ես, ինչպես միշտ, կընդառաջեի մեծ սիրով, եթե հանդիպումն իրոք ԱԳՆ-ԶԼՄ փոխհամագործակցության կամուրջ ստեղծելու միտում ունենար: Բայց այն, ցավոք, վերածվեց «ՀՀ» թղթակից Գեղամ Բաղդասարյանին (որը, ի դեպ, չէր հրավիրվել հանդիպմանը) բարոյապես պատժելու տխուր արարողության: Եվ ի՞նչն էր պատճառը: Պարզվում է, որ Գ. Բաղդասարյանը «համարձակվել» է ճնշադատել Եվրախորհրդում Ադրբեջանի գծով զեկուցող ժակ Բոմելի հակադարաբաղյան դիրքորոշումը, ինչը եւ... վրդովել է Ն. Մելքումյանին: Լրագրողների ձեռքերով լրագրողին պատժելու փորձն առաջացրեց 9 ներկաներից, համենայն դեպս, 5-ի դժգոհությունը: Արմենպրեսի, «Առավոտ», «Պոլոս Արմենիի» թերթերի, ԼՂՀ հեռուստատեսության թղթակիցներն ու ես պատշաճեցինք սեփական տեսակետն արտահայտելու «ՀՀ» մեր գործընկերոջ մամուլի մասին օրենքով սահմանված իրավունքը: Նախարարն արձագանքեց հետեւյալ կերպ, մեջբերում եմ. «Այսուհետեւ ես եմ որոշելու, թե ինչն է ճիշտ, ինչն է սխալ: Ես ինքս ուղղություն կտամ հրապարակումներին»: Ահա այսպիսի «փոխհամագործակցություն»: Ըստ երեւույթին, նախարարը սխալ է ընկալում այդ բառի էությունը: Ուրիշների վզին սեփական կարծիքը փաթաթելու, լրագրողների միջոցով լրագրողին պատժելու փորձը փոխհամագործակցություն չէ: Դա առնվազն կամայականություն է: Մենք հիշեցինք Մելքումյանին, որ 6 տարի առաջ ոմանք նույն ոճով ձգտում էին տերրորիստական ուղղություն տալ ԼՂՀ-ին առնչվող մեր հոդվածներին, ինչին հետեւեց նախարարի, կարծում եմ, անմեկնաբանելի պատասխանը. «Լեւոն Տեր-Պետրոսյանը ճիշտ էր այն օրերին»: «Խոսքը Շահումյանի եւ Մարտակերտի անկա՞ն մասին է» մեր հարցին ի պատասխան դիվանագետին ոչ վայել հուզականությամբ Մելքումյանը բղավեց սենյակով մեկ. «Դու ո՞վ ես»: «Իսկ դո՞ւ ով ես», իմ պատասխան հարցին ինքնաիրաժեշտումը վերջնականապես կորցրած արտգործնախարարը, նշելով, որ ինքն անձամբ դեմ է ազատ մամուլի գոյությանը, ինձ դուրս հրավիրեց սենյակից, որը ես լքեցի մեծագույն հաճույքով:

Այս է եղելությունը: Այնուհետեւ Գ. Բաղդասարյանին պատժելու անհաջող փորձից հետո, շուրջ 3 օր նախարարը տեղեկատվության եւ մամուլի վարչության պես ժաննա Կրիկորովայի միջոցով փորձել է լրագրողների ստորագրահավաք կազմակերպել՝ այս անգամ ինձ դատապարտելու համար: Բայց եւ այդ նախաձեռնությունը, ինչպես եւ նախորդը, ձախողվեց: Լրագրողների 98 տոկոսը հրաժարվեց ստորագրել պատվիրված նամակը: Ստորագրեցին միայն 3 հոգի. Մարսել Պետրոսյանը, Միխայել Հաջյանը ու, 4-ժամյա հորդորներից հետո, լրագրող Մհեր Հարությունյանը: Սակայն 3-ը պատկառելի թիվ չէ: Եվ ահա, աղաղեղեկատվության մասին բարբաջող նախաձեռնողները կեղծում են ԼՂՀ հեռուստատեսության թղթակից Կարինե Օհանյանի ստորագրությունը (այդ մասին վրդովված ասաց ինքը՝ Կարինեն, ներկայացնելով համապատասխան գրություն): 3 ստորագրություն՝ 60-ի հասնող լրագրողներից: Հատկանշական է, որ ծանակագիրը հրաժարվել են ստորագրել Արմենպրեսի, «Պոլոս Արմենիի», «Առավոտ» թերթերի, Ինտերֆաքսի, ԼՂՀ հեռուստատեսության, «Հայաստանի Հանրապետության», այլ լրատվամիջոցների թղթակիցները: Կեղծարարները չեն դիմել նաեւ ՀՅԴ մամուլի կենտրոնին:

Եվ այս ամենը կոչվում է ներքին խոհանոց: Ոչ, պարոնայք: Սա ներքին խոհանոց չէ: Սա ներքին խայտառակություն է:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Տպագրվում է կրճատումներով

Հայկական օդանավերի մուտքը Հնդկաստան

Սկիզբը էջ 1

Գործընթացը «Հայկական ավիաուղիների» որդեգրած նոր սկզբունքն է, որի առաջին արդյունքները հուտխություն տրն Այոյանի, առավել զգալի էին հունիսի 26-ին: Այդ օրը Սանկտ Պետերբուրգում վաճառվել է Հայաստանով Դելի մեկ, իսկ Մոսկվայում 5 ավիատոմսեր: Ուղեւորները Հայաստանում մնալու որեւէ խնդիր չունեին, այլ նախընտրել էին Հայաստանով մեկնել Դելի: ՀԱՈՒ-ի հնգամյա գործունեության ընթացքում նման նախադեպ չէր եղել: Ըստ Այոյանի, խանութները ենթադրել են տալիս, որ «Ձվարթնոց» օդանավակայանը ունի հնարավոր նեռուծ հայտնվելու միջազգային փոխադրումների տարանցիկ կենտրոնում: Ներկայումս ՀԱՈՒ-ն գերմանական «Լուֆթհանզայի» հետ վավերացրել է երկկողմանի ինտեղայն հատուկ սակագնային համաձայնագիր, իսկ մինչեւ հունիսի 20-ը նույնատիպ համաձայնագրեր են նախատեսված կնքելու նաեւ «KLM»-ի, «Էր-Ֆրանսի», «Բրիտիշ Էրուվեյզի»-ի հետ: Ըստ Այոյանի, հիշյալ ավիաընկերությունների հետ համատեղ գործարքների իրականացումը բացատրվում է հուլիսին ՀԱՈՒ-ի Ա-310 արեւմտյան ինքնաթիռի ծառայությամբ:

Մեր ինքնաթիռը մոտ 5 ժամ 3900 կմ օդային ճանապարհ հաղթեց եւ թեթեւ կատարեց Դելիի «Ինդիրա Գանդի»-ի միջազգային օդանավակայանում: Մեզ դիմավորեցին «Էր-Ինդիայի» ղեկավար կազմը, ճամփորդական գրասենյակի տնօրենները, օդանավակայանի պատասխանատուներ: Հնդկական ազգային սովորության համաձայն, ի նշան բարեկամության, հագցվեցին ծաղկեվզնոցներ եւ հյուրասիրեցին ազգային աղանդերներ: Ի դեմ, ի տարբերություն մյուս չվերթերի, յուրահատուկ էր նաեւ ուղեկցորդուհիների սոդասարկումը: Ինքնաթիռում սոդասարկում էր նաեւ հնդիկ ուղեկցորդուհի եւ ուղեւորներին կերակրում էին հնդկական ազգային ուտեստներով:

Ի տարբերություն մյուս չվերթերի, այս անգամ մեզ հնարավորություն ընձեռվեց խաղալ դուրս գալու, ՀԱՈՒ-ն հոգացել էր պատվիրակության բոլոր ծախսերը: Հանգրվանելով Դելիի «Ռադիսոն» հյուրանոցում, բոլոր պայմանները ստեղծված էին հանգստի համար: Շրջագայեցինք խաղաքաղաքի Հին ու Նոր Դելիին: 960 մլն բնակչությամբ Հնդկաստանը 16 պաշտոնական լեզուներով, 400-ից ավելի բարբառներով կրոնական եւ սոցիալական այլազանությունների եւ ծայրահեղությունների երկիր է: Առաջին իսկ պահից նկատելի է ծայրաստիճան չափավորությունը: Բնակչության 35 տոկոսը բացարձակ զուրկ է կացարաններից, օրվա հացը հայթայթում է միայն մուրալով, այսինքն արհեստավարժ մուրացիկներ են: Հնդկաստանում հայաստանի պատվո հյուրասոս որն Սեֆերյանի հավաստմամբ, երկրում հաստատված է անշրջելի ժողովրդավարություն, եւ որոնես ասվածին առաջացրեց փաստեց, որ վարչապետը կարող է ծերբակալվել, կրել իր համապատասխան պատիժը, որից հետո դարձյալ զբաղեցնել վարչապետության աթոռը: Կառավարությունը արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվողներին առատորեն տրամադրում է բոլոր արտոնյալ պայմաններով: Մասնավորապես արտահանողները զերծ են հարկերից, հակառակը՝ կառավարությունից են 5 տոկոսի չափով շահույթ ստանում: Հեռամնաց շրջաններում, գյուղերում գործարարությամբ զբաղվողները 10 տարի ազատվում են հարկերից: Երկրում գործում է երկաթգծի հսկայական ցանց, որը մեծ խոչընդոտ, գյուղերն ու նավահանգիստները միմյանց է համակցում: Զարգացած է նաեւ բանկային համակարգը, ամենափոքր իսկ գյուղում կան մասնաճյուղեր: Մոտ 1 միլիարդ բնակչությամբ երկիրը մեծ շուկա է ցանկացած պետության համար: Հնդկաստանում այսօր արդեն գոյություն չունի հայկական գաղութ: Հնդիկները մուսուլմանական աշխարհի հետ ունենալով Քաշմիրի խնդիրը, խաթարելյակ են նաեւ դարաբաղյան հիմնախնդրին: Կալկաթայում գործում է հայկական եկեղեցի, դպրոց: Եվ ըստ Հովսեփ Սեֆերյանի, չվերթի բացումն ապավել կնպաստի երկու երկրների մերձեցմանը: Տնտեսության զարգացման առումով Հնդկաստանի մոդելը, հյուրասոսի համոզմամբ, առավել ձեռնտու է Հայաստանին, քան եվրոպականն ու ամերիկյանը, քանի որ հարկային, մաքսային, վարկային խաղաքաղաքությունը ճկուն է:

Հնդկաստանում «Ազգին» հնարավորություն ընձեռվեց Հնդկաստան-Պակիստան ռազմական գործողությունների վերսկսման վերաբերյալ հարցազրույց ունենալ ՀՀ-ում Հնդկաստանի դեսպան Վիդյա Բհուշան Սոնիի հետ, որը չվերթի օրը՝ հունիսի 26-ին էր իր հավատարմագիրը հանձնել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին:

22 ժամ անցկացնելով Հնդկաստանում, հունիսի 28-ին վերադարձան Երեւան, մեզ հետ բերելով նաեւ ուղեւորներ, որոնք նույն օրն իսկ մեկնելու էին Լոնդոն: Այսպիսով չվերթի իրականացումը յուրահատուկ էր ընտրության սկզբունքով, կոմերցիոն, սոդասարկման, ուխտաճանչային առումով: Հույս ունենք, որ Հայաստանը այսուհետ կհանդիսանա եվրոպայի եւ Հարավային Ասիայի միջեւ կարող իրականացնող օդային փոխադրումների կենտրոններից մեկը:

ՊԱՏՐԱՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

բանակ

Այստեղ կոփվում է հայրենիքի հուսալի վահանը

«Ազգի» նախորդ համարում ընթերցողին խոստացել էի ավելի մանրամասն պատմել հայոց Ազգային բանակի զորամասերից մեկը կատարած մեր այցի մասին: Նպատակը, կրկնեմ, բանակի առօրյային մոտիկից ծանոթանալն էր:



Զորամասը

Ով իմանա թե որքան ծանոթ է բանակային կյանքին, ամենափորձառ, երբեմն «չնչին» թվացող մանրամասներից կարող է կռահել, ի՞նչ զորամաս է ընկել, այստեղ ինչպիսի՞ն է կարգապահությունը, մարտական ուսուցումը, բարոյահոգեբանական մթնոլորտը, որքան այլ բաներ, որոնց զումարելիներից, ի վերջո, «ծնվում է» ամենագլխավորը՝ զորամասի մարտունակությունը: Մեր այցելած զորամասը չափազանց հաճելի տպավորություն թողեց առաջին հերթին հենց այդ «մանրամասների» առումով, գրեթե իդեալականորեն մաքուր տարածք, զորանոցներ ու այլ շինություններ, հոգատարությամբ հարդարված կանաչ գազոններ, մշակված ծառեր, կոկիկ հագնված զինվորներ ու սպաներ, զինվորական կանոնադրության տառին ու ոգուն համապատասխան հարաբերություններ: Հավատացնում եմ, մենք ոչ սպիտակ ենթաօձիքով զինծառայող չտեսանք, թափթփված զինվոր չտեսանք, տարածքում ծխող մարդ չտեսանք: Ամեն քայլափոխի համոզվեցինք, որ մեծից փոքր, դեռ երեկ զորակոչված նորակոչիկից սկսած մինչեւ հրամանատար, գնդապետ Հովսեփ Հովսեփյանը, իրար հետ հարաբերվում են բացառապես ըստ կանոնադրության պահանջների: Զորամասն ապրում էր իր ներքին «օրակարգի» համաձայն, յուրաքանչյուր ստորաբաժանում զբաղված էր տվյալ պահի համար նախատեսված իր գործով, սկսած շտաբային ու ռազմական պարապմունքներից, վերջացրած զորամասի ֆուտբոլային հավաքական թիմի մարզումը սեփական խաղադաշտում (նախապատրաստվում էին համաբանակային ֆուտբոլային սպարտակիադայի):

Բազմիցս զորամասերում եղած լրագրողիս համար նման երկրորդ «մանրումը» զինվորների վերաբերմունքն էր իրենց սպաների հանդեպ: Մի բան է, երբ զինվորն ըստ կանոնադրության պարզապես հարկադրված է ենթարկվել սպային, եւ միանգամայն այլ, երբ նա ներքուս հպարտանում է իր հրամանատարով, ձգտում է այնպես ծառայել, որ սպան, ինչպես ասում են, անհարմար վիճակի մեջ չընկնի իր պատճառով: Զորամասի տարբեր ստորաբաժանումների միջեւ նկատեցի առողջ մրցակցություն, առաջինը լինելու ձգտում զինվորական կյանքի բոլոր ոլորտներում: Սպաների, եւ առաջին հերթին զորամասի հրամանատարի հեղինակությունն անառարկելի էր, նրանց կողմից ցուցաբերվող խստապահանջությունը խելամտության սահմաններում, զուգորդված ստորադրյալների մարդկային արժանապատվության հարգման, նրանց կարիքների նկատմամբ հոգատարության հետ, ինչը չի կարող համարժեք արձագանք չառաջացնել հոգիներում: Հասարակ օրինակ՝ այստեղ ողջ անձնակազմը շաբաթական երկու անգամ պարտադիր կերպով լողանում է բաղնիքում: Երբ զարմանք հայտնեցի այդպիսի հաճախականությունից, գնդապետ Հովսեփյանը նկատեց. «Հիմա ամառ է, շոգ է, զինվորին հաճախակի բաղնիք չտանես՝ քրտնահոտին չի դիմանա...»: Դե, իսկ ինչ բաղնիքին է վերաբերում, ապա այդպիսի իդեալական մարդություն, այդպիսի համատարած ու բարձրորակ կաֆելապատում, երեւի, Հայաստանում շատ չկա: Նույնը պետք է ասել խոհանոցի մասին: Ընդհանրապես, զորամասում ամենուրեք շինարարական-վերանորոգման աշխատանքներ էին: Զորանոցները տեսքի էին բերվում, տեղադրվում էին ջեռուցման նոր մարտկոցներ, տարածքով մեկ անց էին կացվում նոր ջրագծեր, կատարվում էին այլ աշխատանքներ եւս: Գումարների մեծ մասը, ըստ հրամանատարի, հատկացրել է ՀՀ պաշտպանության նախարարությունը, որոշ բաներ էլ հայթայթել է ինքը՝ տեխնիկական օգնության աղբյուրներից:

Կարեւոր եմ համարում ընդգծել նաեւ մի անտեսանելի-անշոշափելի բան՝ զինվորական ոգին: Զրուցեցի շատ զինվորների հետ եւ համոզվեցի, որ յուրաքանչյուրը հպարտ է իր զորամասի, իր հրամանատարի համար: Ընդհանրապես պիտի ասեմ, որ զորամասի պատերից ներս բարոյահոգեբանական միանգամայն ինքնատիպ մթնոլորտ է: Այստեղ ամեն ինչ ենչում է հայրենասիրությամբ, մեր հերոսական նախնիների ոգով, հայոց զոյամարտի առյուծասիրտ հերոսների, ֆիդայական պայքարի աննման կազմակերպիչների պատգամներով՝ Գեւորգ Չաուշից, Աղբյուր Սերոբից մինչեւ Անդրանիկ: «Երբ գլուխներդ բարձին եք դնում, որ քնեք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին», զինվորին մեծ զորավարի այս ասույթն է հիշեցնում բազմաթիվ ու բազմատեսակ ցուցափեղկերից մեկը...

Հրամանատարը

Քաղաքացիական մասնագիտությամբ մանկավարժ-հոգեբան, նաեւ փիլիսոփա, Փարիզի համալսարանի դոկտոր Հովսեփ Հովսեփյանը ընդամենը 9 տարի առաջ երեւակայել էլ չէր կարող, որ իր նման պատիվ ֆիզիկապես երբեւէ դառնալու է մրոֆեսիոնալ զինվորական, մեկն այն հազարավոր նվիրյալներից, ով ոչ միայն կռել-կոփելու է արցախյան հաղթանակը, այլեւ կանգնած է լինելու հայոց բանակի կազմավորման ակունքներում եւ զինվորական ծառայությունը դառնալու է իր կյանքի գլխավոր գործը: Անցած պատերազմը հիմնիվեր փոխել է նաեւ գնդապետ Հովսեփյանի կյանքը, նրա մեջ բացահայտել օժտված զինվորական ղեկավարին, զգայուն հրամանատարին, մեծ ու փոքր մարտերի հմուտ կազմակերպչին, անվեհեր քաջության տեր մարդուն: Պատերազմն իմաստնացրել է նրան, դարձել կենսականորեն կարեւոր ընդհանրացումների ընդունակ. «Աշխարհում հայ զինվորից ավելի աննման կռվող չկա, մեզ միշտ պակասել է միայն կազմակերպիչը». «Նահանջեցիր՝ շատ ավելի զոհեր կտաս, քան եթե կանգնես ու ճակատես». «Կռիվն ավելի շատ խելքով է լինում, քան թվականով ու զինվածությամբ», «Հայ զինվորն իր հողն էր պաշտպանում, իր սրբությունները, դրանով էլ անպարտելի էր»... Յուրաքանչյուր այսպիսի միտք գնդապետը հիմնավորում է իր մասնակցած բազմաթիվ մարտերից բերվող օրինակներով, եւ հրաշալի պատմող լինելով այդ անում է այնքան համոզիչ, այնքան անմիջականորեն ու պարզ, որ ակամա տրվում ես նրա խոսքերի տրամաբանությանը, հավատում ես նրան եւ քեզ «բռնում ես» այն բանում, որ Աստված մի առաջ հարկը պահանջածին այսպիսի մեկի հետ ուր ասես կգնաս: Գոհ է իր զինվորներից էլ, սպաներից էլ. «Ամեն մեկի մեջ հողի, հայրենիքի զգացողություն կա, մեկի մեջ շատ, մյուսի մեջ մի քիչ պակաս, պիտի զարգացնես»: Չի թաքցնում զորամաս է, ամեն ինչ էլ պատահում է կան նաեւ կարգապահությունը խախտողներ, զանցառուներ, պատժվածներ: Գտնում է, որ բանակին պատիվ չբերող այդպիսի երեւույթները չպիտի թաքցնել, որ մեզ անհրաժեշտ է հաղթահարել խորհրդային բանակից մնացած այն հոգեբանությունը, երբ այդպիսի երեւույթներով էր գնահատվում ցանկացած սպայի աշխատանքի հարկադրելով «աղբը տանից դուրս չհանել», քանզի դրանից էր կախված նրա հետագա ծառայողական առաջընթացը եւ նույնիսկ ընտանիքի բարեկեցությունը: Դեմ է ամեն ցուցամոլության եւ նույնիսկ զորամասերում սեփական ծամուլ հրատարակելուն, քանզի համոզված է, որ դա «պիտի ծառայի միայն հրամանատարների գովաբանությանը»: Կողմ է բանակ-ժողովուրդ կապերի ամրապնդմանը եւ թույլատրում է բոլոր ցանկացողներին, զինվորների ծնողներին ու մյուս հարազատներին ամեն կիրակի այցելել զորամաս, տեսակցել որդիներին եւ մի քանի ժամ անցկացնել նրանց հետ: Դժգոհ է հանրապետության կրթական համակարգի ներկա վիճակից. «Զինվոր կա, հարցնում ես՝ ո՞վ է Մեսրոպ Մաշտոցը, ասում է՝ գրող է, մեկ ուրիշն էլ Կոմիտասին գիտե որպես... երգչի: Շարքային կազմի որոշ մասի կրթական այդ բացը մենք այստեղ ենք լրացնում, մի՞թե դա պատիվ է բերում դպրոցին»: Գնդապետը հիացած չէ նաեւ բուհերի ռազմական ամբիոնների աշխատանքով. «Լեյտենանտի կոչումով գալիս են մեզ մոտ, երկու տարի աշխատում են որպես դասակի հրամանատար, եւ միայն զորացրվելիս դառնում են իսկական սպա»: Այնուամենայնիվ, գտնում է, որ մեր Ազգային բանակն այժմ տարածաշրջանում ամենամարտունակն է. «Տագնապի դեպքում, հաշված րոպեների ընթացքում իմ զորամասը կարող է դուրս գալ մարտական առաջադրանքի: Հավասար պայմաններում մենք կջախջախենք կրկնակի ուժեղ ցանկացած թշնամու: Խնդիրն այն է, որ հասնենք մի մակարդակի, երբ վստահ լինենք հնգապատիկ-տասնապատիկ զորեղ թշնամուն ջախջախելու մեր կարողությանը, չէ՞ որ թվականով փիչ ենք, ուրեմն պիտի ապավինենք մարտական հմտությանն ու մեր զորավոր ոգուն...»:

Մենք

«Մենքը» «Ազգի» գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիսյանն է, ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության ու քարոզչության վարչության աշխատակից Պետրոս Դեմիրճյանը, ազգային հեռուստատեսության «Զինուժ» ծրագրի երկու երիտասարդ հեռուսալրագրող, ռադիոյի եւ հեռուստատեսության մենեջերչուհի, արվեստի միջազգային կենտրոնի «Ամարաս» համույթի ղեկավար Հասմիկ Եղիազարյանը՝ մի քանի երաժիշտներով, եւ ես: Շրջագայեցինք զորամասում, մանրամասն ծանոթացանք զինվորների կյանքի ու կենցաղին, ներկա եղանք զինվորական տողանին: Չգիտեմ մյուսներն ինչպես, բայց ես հերթական անգամ չկարողացա պահել հուզմունքս, երբ անթերի շարված զորամասը, պատասխանելով հրամանատարի ողջույնին, խրոխտ, հզոր, հուժկու եւ հստակ պատասխանեց. «Ծառայում եմ Հայաստանի Հանրապետությանը»: «Ազգի» խմբագիրը սրտառուչ խոսք ասաց զինվորներին. «Հայաստանում հիմա ամեն ինչից երկու հաս կամ ավելի կա, տրոհվել են կուսակցությունները, միությունները, խմբագրությունները, անգամ եկեղեցին: Միայն բանակն է՝ որ մեկն է, միակն է եւ դուք սիրելի զինվորներ, այդ միակության, միասնության գաղափարի կրողն եք... Ձեզնից, բանակից է սկսվում մեր երկրի, մեր ժողովրդի, բոլոր հայերի միասնությունն ու միակամությունը...»: Արտանց բարեմաղթելով բարի ծառայություն, խաղաղ երկինք եւ ըղձալի վերադարձ հարազատ օջախներ, «Ազգի» գլխավոր խմբագիրը բոլորին հրավիրեց ակումբ՝ համերգի: Երգչուհի Հասմիկ Եղիազարյանի սմանչելի կատարումներին միացան հարյուրավոր զինվորներ, եւ ժամից ավելի բոլորը երգում էին, պարում, նաեւ մենակատարում: Հիշողությանս մեջ մնաց սեփականավանցի զինվոր Բեգլար Սահակյանի հոգեպարար ձայնը: Մեր այցը զորամաս իսկապես վերածվեց մի աննկարագրելի տոնակատարության: Ազգային բանակի զորամասեր ամեն մի այսպիսի այցից անձամբ ես վերադառնում եմ հոգեւոր հզոր լիցքեր ստացած, ներշնչված, եթե կուզեք՝ վեհացած: Ով ինչ ուզում է ասի, ինչքան ուզում է «էչփորելով» միայն վատը տեսնի ու գրի, ես իմ փորձով համոզվել եմ՝ մեր բանակում ու նրա զորամասերում լավը, ուրախացնողը շատ ու շատ անգամ ավելի է: Այստեղ կոփվում է մեր հայրենիքի հուսալի վահանը...

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Որտե՞ղ է Վահան Հակոբյանը

Շիրակի մարզի «Հյուսիսային Հայաստան» պատշտոնաթերթի խմբագրակազմը դիմել է «Ազգ»-ին՝ խնդրելով թերթի աջակցությունը երեք տարի ծգվող մի ցավալի պատմության չմանդվող «կծիկի» ծայրը գտնելու համար: Խոսքը վերաբերում է Գյումրիի Ջափարիձե-91 հասցեում բնակվող Հակոբյանների որդու՝ Վահան Հակոբյանի հանելուկային անհետացմանը Հորադիզ ավանում տեղակայված զորամասից: Վահան Հակոբյանը, որ ծառայության էր մեկնել 1994 թ. դեկտեմբերի 4-ին, մինչեւ 1995 թ. մայիսի 22-ը կանոնավոր նամակագրության մեջ է եղել ծնողների հետ: 1995 թ. մայիսի 22-ին, սակայն, դասակի հրամանատար Սամվել Կարապետյանը զանգահարել է Հակոբյաններին եւ տեղեկացրել, թե Վահանն, իբր արձակուրդ է վերցրել եւ մայիսի 22-ին կժամանի հայրենի քաղաք: Տղան չի

վերադարձել, իսկ մեկ ամիս անց զանգահարել է նույն Կարապետյանը՝ հայտնելու, որ Վահան Հակոբյանն ավտոմատը վերցրել ու փախել է զորամասից, եւ առաջարկել է. «Ձենքը բերեք հանձնեք, իրեն ինչ ուզում եք արեք»: Հայրը մեկնել է զորամաս, սակայն ապարդյուն. որեւէ բան չի պարզվել: Հրամանատարը, խոսելով այդ օրերին Հորադիզ այցելած շինչկատի ինչ-որ ավտոբուսի մասին, ենթադրություն է հայտնել, թե տղան փախել է հենց այդ ավտոբուսով, իսկ զորամասի տղաները պատմել են, թե Վահանն այցելել է հարեւան (Մարջալի) գյուղը՝ ծառայություն անցած իր զորացրված ընկերոջը (Վաչիկին) նամակ հանձնելու, որից երեք օր անց շաբի պետը, ռացիայով կապվելով Վաչիկի հետ, պահանջել է, որ Վահանը վերադառնա դիրքերը (ընկերը, սակայն, ժխտել է Վահանի՝ իրեն այցելելու վարկածը):

Հետագայում Հակոբյանները բազմիցս դիմել են տարբեր աստյաններ՝ զինվորական ոստիկանության վարչություն, զինկոմիսարիատի Գյումրիի բաժանմունք, Կարմիր խաչի միջազգային ընկերություն, զինվորական դատախազին, «Հյուսիսային Հայաստան» թերթի միջոցով՝ մարզպետին: Սակայն ոչ գրավոր, ոչ բանավոր որեւէ սպառիչ պատասխան չեն ստացել: Այժմ դիմում են Աժ նախագահ Խոսրով Հարությունյանին՝ խնդրելով «որեւէ հուսադրող տեղեկություն հայտնել Վահանի մասին, որը շատ խելացի, ազնիվ, աշխատասեր, հայրենասեր եւ ծնողասեր տղա է», եւ իրենց «դարդին դարման անել»:

Ավելորդ է ասել, որ երիտասարդի անհետացման հանգամանքները, նրա ճակատագիրը պարզելը զինվորական ոստիկանության անմիջական պարտականությունն է, եւ առնվազն անհասկանալի է այն անտարբերությունը, որով ընդունվել է տարիներ շարունակ որդու վերադարձին կամ առնվազն նրա մասին տեղեկությունների սպասող ծնողների աղաչանքը (կարծես կորածը մի ասեղ էր, ոչ թե հայրենիքին ծառայելու մեկնած 19-ամյա երիտասարդ հայորդի): Դասակի հրամանատարից եւ Վահան Հակոբյանի ընկերներից ստացված կցկտուր տեղեկությունների հակասականությունը հուշում է, որ դրանց նպատակը տղայի հետ կատարվածը պարզելը չէ: Իրավապահ մարմինները, մեր կարծիքով, պարտավոր են ի հայտ բերել այս մութ պատմության ծալքերը:

Խմբագրությունը, հետաքննություն վարելու գործառույթը, բնականաբար, «զիջելով» իրավապահ մարմիններին, տպագրում է Վահան Յուրիկի Հակոբյանի լուսանկարը, գուցե մեր ընթերցողների մեջ կգտնվեն այնպիսիք, որ որեւէ տեղեկություն ունեն կորած երիտասարդի մասին:

ԼՈՒԻԶԱ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՍԱՍՈՒ

Հարավամերիկյան տուկան դեռևս հրապուրիչ է

Երկայնումս աշխարհի զանազան տարածաշրջաններում գործում են ընդհանուր տուկաներ: Հարավային Ամերիկայի ընդհանուր տուկան Մերկոսուրն է, որը վերջերս նշեց իր 7-րդ տարեդարձը: Հարավամերիկյան այդ կազմակերպության մեջ մտնում են Արգենտինան, Բրազիլիան, Պարագվայը եւ Ուրուգվայը, իսկ Չիլին եւ Բոլիվիան առայժմ անդամության թեկնածուներ են: Մերկոսուրիի հանդեպ մեծ հետաքրքրություն է հանդես բերում Եվրամիությունը, որը հարավամերիկյան ընդհանուր տուկան համարում է իր բնական գործընկերներից մեկը: Այս տարվա ապրիլին պաշտոնական այցով Բուենոս Այրես մեկնած Իտալիայի վարչապետ Ռոմանո Պրոդին կրկնեց իրենից առաջ նույն խաղահում Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի, Իսպանիայի եւ Պորտուգալիայի վարչապետներ Խոսե Մարիա Ազնարի եւ Անտոնիո Գուտերեսի խոսքերը, որ Եվրոպան եւ Մերկոսուրը պարտավոր են համաձայնության հասնել:

Հարավամերիկյան տուկա թափանցելու համար ծավալված մրցակցությունը բացատրվում է նրանով, որ այդ տուկան բավական հրապուրիչ է: Մեքսիկական պեսոյի ճգնաժամն այս տարածաշրջանում լիովին հաղթահարված է եւ 1997 թ. արձանագրված տնտեսական ցուցանիշները, ՄԱԿ-ի լատինամերիկյան եւ կարիբյան հանձնաժողովի տվյալների համաձայն, համարվում են «լավագույններ վերջին 30 տարում»: Ներկայումս 10 տոկոսի հասցված սղաճը երբեմն այդման ցածր չէր եղել: 1988 թ. ի վեր առաջին անգամ տարածաշրջանում կրճատվել է գործազրկությունը: Անցյալ տարի Լատինական Ամերիկայում տնտեսական միջին աճը կազմեց 5,2 տոկոս, ըստ որում առաջատարներն էին Արգենտինան (7,8 տոկոս) եւ Մեքսիկան (7,1 տոկոս): Կոլումբիայի Կարտախենա քաղաքում այս տարվա մարտին Զարգացման միջամերիկյան բանկի (ԶՄԲ) ընդհանուր ժողովին մասնակցում էին լատինամերիկյան 21 պետություններ, որոնցից 20-ը ներկայումս տնտեսական վերելք է ապրում: Միակ բացառությունը Ջամայկան է, որտեղ անցյալ տարի տնտեսական անկումը կազմել է 1 տոկոս:

Հարավային Ամերիկայում 1997 թ. կատարվել են 73,5 մլրդ դոլարի արտասահմանյան ներդրումներ, որոնք կազմված են մասնավորապես սեփականաշնորհման լայնածավալ ծրագրերի հետ: Այդ ներդրումների մեծ մասը 44 մլրդ դոլարը, կազմում են տեղական արտադրության մեջ կատարված անմիջական ներդրումները: Վերջիններս զգալի տոկոս են կազմում նաեւ բանկային հատվածում:

Սակայն, ինչպես նշում է «Էքսպրես» հանդեսը, հարավամերիկյան երկրների տնտեսության բարվոք վիճակը դժվար թե երկար շարունակվի: Հոռետեսության համար կա 4 լուրջ պատճառ: Ասիական ճգնաժամը, ընտրությունների ժամանակաշրջանում հարկային կարգապահության անկումը, սոցիալական անհավասարությունը եւ բռնությունների աճը:

Ասիական ճգնաժամն անկասկած հետեւանքներ կունենա Հարավային Ամերիկայում: Վերջինս ենթակա է միաժամանակ ասիական երկրներում արժեզրկման հետեւանքով էժանացող ապրանքների մրցակցությանը եւ ներդնողների նորահայտ թերահավատությանը: Դրան գումարվում են հումքի (նավթի, թղթաքանդվածի, պղնձի) գների անկումը եւ համաշխարհային տնտեսական գործունեության հնարավոր կրճատումը: ԶՄԲ-ի փորձագետները գտնում են, որ այս տարի հարավամերիկյան երկրների տնտեսական աճը կազմելու է միջին հաշվով 3 տոկոս: Ասիական ճգնաժամից ամենից շատ տուժում է Բրազիլիան: Այդ երկրի ներքին համախառն արտադրանքը 1997 թ. աճեց ընդամենը 3,5 տոկոսով, քանի որ անցյալ տարվա հոկտեմբերից կիրառվում է տնտեսական խիստ միջոցառումների նոր ծրագիր: Ասիական տնտեսական ճգնաժամը հարավամերիկյան երկրների ներքին սպառման աճի հետ մեկտեղ հանգեցրեց այդ երկրների առեւտրային պակասորդների հետագա խորացմանը: Մասնավորապես Միջազգային արժութային հիմնադրամն ապրիլին ահազանգ հնչեցրեց Արգենտինայի տնտեսական անհամամասնության առիթով:

Սահմանության երկրորդ պատճառը հարավամերիկյան երկրներում աղքատության նշագծից ցածր կենսամակարդակ ունի: Աղքատները հատկապես շատ են գյուղական վայրերում: Սոցիալական անհավասարության առումով Հարավային Ամերիկան աշխարհում առաջատար դիրք է գրավում Աֆրիկայի հետ մեկտեղ: Ուստի հարկ կլինի բյուջետային խնայողությունները ներդաշնակեցնել սոցիալական պաշտպանությանն ու կրթությանն ուղղված ջանքերի հետ:

Հարավամերիկյան երկրներում բռնությունների աճը սերտորեն կապված է սոցիալական անհավասարության հետ: Տարածաշրջանի պետություններում բռնությունների մակարդակը հնգապատիկ բարձր է, քան աշխարհի մյուս տարածաշրջաններում: Հարավամերիկյան երկրներում ամեն տարի կատարվում է 140 հազար սպանություն: ԶՄԲ-ի փորձագետների կարծիքով, այս անապահով վիճակը տնտեսական զգալի վնաս է պատճառում տարածաշրջանի երկրներին տարեկան 2-3 տոկոսով նվազեցնելով տնտեսական հնարավոր աճը:

Պ. Բ.



Անգլիայից Ֆրանսիա՝ արագընթաց նավերով

Ֆրանսիական ճեպընթաց գնացքներին հաջորդել են արագընթաց նավերը: Ֆրանսիայի Շերբուր քաղաքից Պորտսմուտ այժմ կարելի է մեկնել «Սուպեր սթար» կատամարանով, որի առաջին կարգի տեղերը կաբեթաս բազկաթոռներ են: Իսկ Սեն Մալո-Ուեյմուտ գծի վրա երթեւեկում է նվազ հարմարավետ «Կոնդորը»: Երկու նավերն էլ ունեն միեւնույն կառուցվածքը եւ խաղամենեներ, իսկ ղեկավարման վահանակը բավական պարզեցված է, տեղեկացնում է «Էքսպրես» հանդեսը: Արագընթաց կատամարանների դիզելային շարժիչներն ունեն 40000 ձիաուժ հզորություն, որով հնարավոր կլիներ օլիմպիական լողավազանը ջրով լցնել 15 վայրկյանում: Երկու նավերի միջին արագությունը 42 հանգույց է կամ ժամում 75 կիլոմետր: Դրա շնորհիվ Անգլիայից Ֆրանսիա նավարկության տեւողությունը կիսով չափ կրճատվում է: Այսպես, բրիտանացիները կարող են Նորմանդիայի ափերին հասնել 2 ժամ 45 րոպեում՝ երթուդարձի համար վճարելով մոտ 33 դոլար:

Շատերի կարծիքով, արագընթաց նավերի շնորհիվ հնարավոր է զարգացնել զբոսաշրջության նոր ձեւեր, քանի որ հիմա արդեն մարդիկ կարող են ծովով Անգլիայից Ֆրանսիա մեկնել եւ նույն օրն էլ վերադառնալ: Նավափոխադրումների ղեկավար Ժակ Վիդմանը հայտարարեց, թե իրենց նպատակը Լա Մանշի տակ երթեւեկող ճեպընթացների հետ մրցելը չէ, թեեւ տեղացիներից շատերն Անգլիա մեկնելու համար նախընտրում են հենց Սեն-Մալոյում կամ Շերբուրում կատամարան նստել եւ չհասնել Կալե, որտեղից շարժվում են գնացքները: Վիդմանը հույս ունի, որ հենց միայն «Կոնդորի» շնորհիվ Լա Մանշում ուղեւորափոխադրումների ծավալը կաճի տարեկան 60 հազարով:

ՏԱՍՏԱՌՈՏ

Ռումինիայի նախագահը Բաքվում

ԲԱՔՈՒ, 29 ՅՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռումինիայի նախագահ Էմիլ Կոնստանտինեսկուն պաշտոնական այցով այսօր ժամանում է Ադրբեջանի մայրաքաղաք: Բոլոր հանդիպումներն ու բանակցությունները կանցկացվեն երեքշաբթի օրը Հեյդար Ալիեւի նախագահական պալատում: Դրանց արդյունքների հիման վրա նախատեսվում է ստորագրել մի շարք փաստաթղթեր, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել են Ադրբեջանի արտգործնախարարությունում:

18 զոհ պակիստանա-հնդկական սահմանում

ԻՍԼԱՄԱԲԱԴ, 29 ՅՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պակիստանի եւ Հնդկաստանի միջեւ փաստացի վերահսկողության գծի (սահմանի) հյուսիսային տեղամասերում վերջին մի քանի օրերին չդադարող հրետանային փոխհրաձգությունների հետեւանքով զոհվել է եւս առնվազն 18 պակիստանցի, որոնց մեծ մասը խաղաղ բնակիչներ էին: Ըստ Պակիստանի զինվորական աղբյուրների, Հնդկաստանի զորքերը հրետանուց եւ ծանր նռնականետներից բազմիցս կրակ են բացել Քաշմիրի պակիստանյան մասի Չակոտիի, Պանդուի եւ Ասմականի շրջանների մի շարք բնակավայրերի վրա:

Իտալիայի կառավարության ղեկավարը կայցելի Իրան

ՀՌՈՄ, 29 ՅՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Իտալիայի կառավարության ղեկավար Ռոմանո Պրոդին հունիսի 30-ից հուլիսի 2-ը այցով կգտնվի Իրանում: Այդ մասին այստեղ հայտնի է դարձել պաշտոնական աղբյուրներից: Առաջիկա ուղեւորությունը կլինի արեւմտյան խոշոր երկրներից մեկի կառավարության ղեկավարի առաջին այցը Թեհրան 1979 թվականի «իսլամական հեղափոխությունից» հետո: Իտալացի մեկնաբանների գնահատմամբ, կառավարության ղեկավարի այցը առանձնակի նշանակություն է ստանում ներկայիս պայմաններում, երբ մի կողմից արեւմտյան երկրները, ներառյալ ԱՄՆ-ը, եւ, մյուս կողմից, Թեհրանը «հողի հանդիպական զոնդավորման» զգուշավոր փորձեր են անում երկխոսության վերականգնման նկատառումով: Այստեղ այն կարծիքին են, որ Ռոմանո Պրոդիի ուղեւորության տպավորությունները կդառնան կարեւոր տարրերից մեկը, որի վրա հենվելով Իրանի նկատմամբ իրենց քաղաքականությունը կկառուցեն նաեւ եվրամիության մյուս երկրները:

ՄԵՐՁԲԱԼԹԻԿԱ

Լիտվայի ամերիկացի նախագահը

1944 թ. 17-ամյա Վալդաս Ադամկուսը թողեց հայրենի Լիտվան ու մեկնեց Ամերիկա: Ապա սկսվեցին պայքարի տարիները, սկզբում կռվում էր Ֆաշիստական Գերմանիայի, այնուհետեւ սովետական բանակի դեմ: Աստիճանաբար Ադամկուսը դարձավ Ամերիկայի շարքային քաղաքացի ու հաջողությունների հասավ: Մինչեւ 1996 թ. թոշակի անցնելը նա Միացյալ Նահանգների Արքակա միջավայրի պահպանության գործակալության ավագ մասնագետ եւ Հանրապետական կուսակցության ակտիվ դեմքերից էր: Անցած տարի Ադամկուսը վերադարձավ անկախ Լիտվա առաջադրվեց ու ընտրվեց մարտագահ: Հնդամենը առաջին անգամ ամերիկացին էր, որն այլ պետության նախագահ դարձավ (հետագայում նա հրաժարվեց Մ. Նահանգների քաղաքացիությունից): 71-ամյա Ադամկուսը եւ «Նյուզուիքի» թղթակիցը հանդիպեցին Վիլնյուսում: Թարգմանաբար ներկայացնում ենք հատվածներ նրանց զրույցից:

– Այսօր ավելի շատ լիտվացի՞ եք, թե՞ ամերիկացի:

– Ինձ միշտ էլ թվացել է, թե երկու ես ունեմ: Տարիներ շարունակ ազնվորեն ու պարտաճանաչ աշխատել եմ Միացյալ Նահանգների համար: Բայց երիտասարդական տարիներին թողած հայրենիքս, կռված ու տառապած ազգը երբեք չեմ մոռացել: Միշտ ինքս ինձ հարց եմ տվել՝ ի՞նչ եմ պարտական եւ ո՞ւմ: Երկրին, որը մտահոգվոնս զարգացնելու, կրթելու հնարավորությո՞ւն է տվել, թե՞ հայրենիքիս: Եվ միշտ ինձ մեղավոր եմ զգացել: Բայց Լիտվան ինձ չմերժեց:

– Նախագահության ընթացքում կօգտագործե՞ք ամերիկյան դեմոկրատական դպրոցի սկզբունքները:

– Ամեն կերպ պիտի ջանամ բացատրել ժողովրդիս, թե ինչի շնորհիվ են արեւմտյան պետությունները հաջողության հասել, ձգտեմ ստիպանաբար դեմոկրատական գաղափարներ ներմուծել Լիտվա: Իսկ դեմոկրատիայի մասին միայն գրքերից կամ թերթերից իմանալն անհնար է: Դրա համար պետք է ապրել դեմոկրատիայի պայմաններում: Նախագահությանս տարիներն ուզում եմ օգտագործել մարդկանց դեմոկրատիային ծանոթացնելու համար, եւ ոչ թե բառերով, այլ՝ օրինակներով: Իսկ 7 տարին դրա համար հիշ ժամանակ չէ:

– Ռուսները ձեզ ինչպե՞ս են վերաբերվում:

– Կասկածամտորեն: Պիտի փորձեմ նրանց համոզել: Այսօր Ռուսաստանն էլ դեմոկրատական ուղու վրա է: Հույս ունեմ, որ կհաջողվի:

– Հիմա Ռուսաստանը դեմոկրատական չէ՞:

– Իհարկե՝ ոչ: Նա դեռ իր վերքերն է բուժում:

– Կռվի տարիները չե՞ն փոխել ձեր կարծիքը Ռուսաստանի վերաբերյալ:

– Ես կռվում էի ոչ թե ռուսների, այլ կոմունիզմի դեմ: Կոմունիստներին ազատ երկիր էին փորձում զավթել: Մենք կռվում էինք մեր ազատության, գոյատեւման համար: Այսօրվա Ռուսաստանը տարբեր է: Երիտասարդ ռուսները դեմոկրատներ են: Եվ ինչքան ազատ Ռուսաստանը դեմոկրատական դառնա, այնքան լավ: Կոմունիստական տասնամյակները լրջորեն վնասել են մարդկանց հոգեբանությունն ու մտածելակերպը: Բայց Ռուսաստանը զարգացման գերազանց հնարավորություններ ունի:



– Ռուսի տպա՞ն եք:

– Երբեմ: Ես ֆաշիստների դեմ ընդհատակյա թերթ էի հրատարակում: Ցիծաղելի կարող է թվալ, բայց ինձ նման հազարավորներ կային, որ փորձում էին դատարկ ձեռքերով կանգնեցնել ռուսների առաջխաղացումը: Ես շատ լավ ընկերների կորցրի:

– Կարծում եք Լիտվային անհրաժե՞շտ է ՆԱՏՕ-ի անդամ դառնալ:

– ՆԱՏՕ-ին անդամագրվելն իմ արտաքին քաղաքականության հիմնարարերից մեկն է: Եվրոպան միավորվում է, իսկ մենք նրա մի մասն ենք: ՆԱՏՕ-ն միայն ռազմական դաշինք չէ, այլ օդանավերն ու տանկերն են կարեւոր: Հեռանկարները շատ ավելի լայն են: Մենք պիտի ինտեգրվենք համաեվրոպական բոլոր կառույցներին: ՆԱՏՕ-ի անդամ դառնալը 5-7 տարվա խնդիր է, բայց ես լավատես եմ: Կարծում եմ Ռուսաստանն էլ մինչեւ 2005 թ. կվերանայի իր վերաբերմունքը:

Թարգմանեց Ռ. ՊՈՂՈՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Նա հեռատեսորեն կանխազգում էր աղետը

Երեկ Երեւանը, ամբողջ Հայաստանը, ողջ հայությունը հրաժեշտ տվեց մեծ գրողին: Նա գնաց միանալու մեր մյուս մեծերին անմահության մեջ: Դեռ շատ կգրվի նրա ստեղծագործական վաստակի մասին: Նրա ժամանակակիցները կգրեն նաեւ ազգային տագնապների ու ներքին խմորումների նկատմամբ նրա ներքին սուր զգացողության մասին, դա լինի ղարաբաղյան շարժում, Բեյրութի հայության ճակատագիր, թե խորհրդային պայմաններում ազգային արժանապատվությունը բարձր պահելու անհրաժեշտություն: Ստորեւ ներկայացնում ենք հատված նվիրված Սերո Խանզադյանին, Հորի Բալայանի «Օջախ» գրքից:

Կեսգիշերին արթնացա հեռախոսի երկար զանգից: Իսկույն գլխի ընկա, որ միջքաղաքային է: Վախեցա: Չլինի տանը բան է պատահել: Տնից չէին զանգահարում: Բայց զանգահարում էր ինձ շատ հարազատ մարդ՝ Սերո Խանզադյանը: Նա ասաց, որ «Ավանգարդ»-ում կարդում է իմ ռեպորտաժները, ուշադրությամբ հետեւում է «Արշավի ընթացք»-ին: Նա ինձ՝ դարաբաղցուս հետ խոսում էր զանգեզուրյան-դարաբաղյան բարբառով: Իսկ հետո կարգադրեց. «Վաղն անպայման արի Երեւան: Շտապ գործ կա»: Ու առաջին անգամ իմ կյանքում ես չէի, որ Թուրքիան ԱՍՆ-ին թույլ է տվել ՍՍՀՄ-ի սահմանին մոտ ռազմական բազաներ ունենալ, այլ այն, որ նա երբեք անհատույց բան չի անում: Ես համոզված եմ, որ նրանք առուծախ են արել: Թուրքիան ասել է. ես քեզ ռազմական բազաների տեղ եմ տվել, դու էլ պիտի ամեն ինչ անես, օգտվելով իրավիճակից, որ վերանա Լիբանանի հայկական համայնքը»:

Ամբողջ աշխարհը գիտե, որ այդ համայնքը ասես ժամանակակից թուրք գաղափարախոսների աչքի փուշը լինի, որոնք ամեն կերպ ուզում են խեղաթյուրել պատմությունը եւ արդարանալ համաշխարհային հասարակության առաջ հայկական կոտորածների համար:

Լիբանանի հայ գաղութն այսօր, իր հայկական դպրոցներով ու համալսարանով, իր լրագրերով ու գրքերով ամեն օր, ամեն ժամ, արդար դատաստան է տեսնում մարդասպանների հետ: Ամբողջ աշխարհին թույլ չի տալիս մոռանա մի ամբողջ ժողովրդի ահավոր ողբերգության մասին, որ թուրք գազանների մեղքով կործանման եզրին էր հասել հազար ինը հարյուր տասնհինգ թվականին:

Ես լսում էի Սերո Խանզադյանին, բայց չէի կարողանում ըմբռնել ինձ մոտ գալու նրա հիմնական նպատակը: Եվ խորաթափանց գրողը, ասես նկատելով մտքիս, ասաց.

- Ես կարծում եմ, որ մեր գրողներից մեկնումեկը պետք է մեկնի Լիբանան: Կրկնում եմ, զգում եմ, շատ շուտով այնտեղ հավերժարար կտեսնեն հայ համայնքի հետ, որը աշխարհը գիտե, չի ուզում խառնվել եղբայրասպան պատերազմին: Պետք է ամեն ինչ աչքով տեսնել ու հետո համայն աշխարհին պատմել ճշմարտությունը: Ես կարծում եմ, որ դու պետք է մեկնես...

Նույն օրը Խանզադյանը վերադարձավ Երեւան: Ես մնացի Արարատում: Շարունակում էի աշխատել «Վերածննդի» ծրագրով, սակայն անընդհատ մտածում էի Խանզադյանի այցելության մասին: Եվ, առաջ ընկնելով իրադարձություններից, պետք է ասեմ, որ, դժբախտաբար, իրականացան իմաստուն գրողի կանխագուշակումները արշավի ավարտից մեկ ամիս հետո աշխարհն իմացավ, որ Լիբանանի հայ համայնքը դարձավ հրեշավոր տեռորի զոհ: Եվ ես մեկնեցի Բեյրութ: Սեփական աչքովս տեսա հայոց ողբերգությունը: Վերադառնալով՝ գիրք գրեցի, որը կոչվեց «Երկու կրակի մեջ»: Եվ անընդհատ մտածում էի ավագ ընկերոջս, մեծանուն գրողի մասին, որը հեռատեսորեն կանխազգում էր աղետը:

ՀՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

մերժեցի նրան: «Անհնարին է: Չեմ կարող խախտել ավանդույթը: Շատ փիչ է մնացել: Շուտով Երեւան կվերադառնամ»: Դեռ խոսքս չէի վերջացրել, երբ նա ընդհատեց ինձ. «Ուրեմն վաղը ես կգամ: Ինձ սպասիր հյուրանոցում»:

Այլեւս չկարողացա հնել մինչեւ առավոտ: Մտածում էի Սերո Խանզադյանի զանգի մասին: Մտածում էի նրա մասին: Մտածում էի ջերմությամբ եւ կարոտով: Եվ ընդհանրապես կարոտել էի հարազատներիս ու ընկերներիս, որոշիսի, բարեբախտաբար, այսօր շատ ունեմ Երեւանում: Չէ՞ որ ընդամենը մի քանի տարի առաջ ծանոթներ չունեի Երեւանում, իսկ այսօր ընկերներ, բարեկամներ ունեմ, շատ բարեկամներ: Մի ամբողջ հարստություն: Եվ իմ այդ հարստության, իմ այդ մեծ նվաճումի մեջ առանձնակի տեղ է գրավում Սերո Խանզադյանը: Ու առավոտյան նա պիտի գա Արարատ: Ուրեմն շատ լուրջ բան է պատահել, քանի որ նա ինքն է գալիս այստեղ:

Իսկապես լուրջ բան էր պատահել: Սամուլում արդեն տագնապալի հաղորդումներ էին հայտնվում Լիբանանի հայկական համայնքում տեղի ունեցող զրոյակացիաների մասին: Թվում էր, որ դա անսպասելի չպիտի լիներ՝ մի քանի տարի այնտեղ պատերազմ է: Իսկ Լիբանանում կա հայկական համայնք, որը, բնականաբար, նույնքան պետք է տուժի պատերազմից: Սակայն Խանզադյանը խոսում էր այլ բանի մասին: Նա ասես կանխազգում էր, թե ինչ կարող էր տեղի ունենալ այնտեղ:

Իմանալով, որ Թուրքիան ԱՍՆ-ին թույլ է տվել ռազմական բազաներ ստեղծել իր տարածքում, հայ գրողն ասաց. «Այստեղ հարցն այն չէ, որ Թուրքիան ԱՍՆ-ին թույլ է տվել ՍՍՀՄ-ի սահմանին մոտ ռազմական բազաներ ունենալ, այլ այն, որ նա երբեք անհատույց բան չի անում: Ես համոզված եմ, որ նրանք առուծախ են արել: Թուրքիան ասել է. ես քեզ ռազմական բազաների տեղ եմ տվել, դու էլ պիտի ամեն ինչ անես, օգտվելով իրավիճակից, որ վերանա Լիբանանի հայկական համայնքը»:

Ամբողջ աշխարհը գիտե, որ այդ համայնքը ասես ժամանակակից թուրք գաղափարախոսների աչքի փուշը լինի, որոնք ամեն կերպ ուզում են խեղաթյուրել պատմությունը եւ արդարանալ համաշխարհային հասարակության առաջ հայկական կոտորածների համար:

Լիբանանի հայ գաղութն այսօր, իր հայկական դպրոցներով ու համալսարանով, իր լրագրերով ու գրքերով ամեն օր, ամեն ժամ, արդար դատաստան է տեսնում մարդասպանների հետ: Ամբողջ աշխարհին թույլ չի տալիս մոռանա մի ամբողջ ժողովրդի ահավոր ողբերգության մասին, որ թուրք գազանների մեղքով կործանման եզրին էր հասել հազար ինը հարյուր տասնհինգ թվականին:

Ես լսում էի Սերո Խանզադյանին, բայց չէի կարողանում ըմբռնել ինձ մոտ գալու նրա հիմնական նպատակը: Եվ խորաթափանց գրողը, ասես նկատելով մտքիս, ասաց.

- Ես կարծում եմ, որ մեր գրողներից մեկնումեկը պետք է մեկնի Լիբանան: Կրկնում եմ, զգում եմ, շատ շուտով այնտեղ հավերժարար կտեսնեն հայ համայնքի հետ, որը աշխարհը գիտե, չի ուզում խառնվել եղբայրասպան պատերազմին: Պետք է ամեն ինչ աչքով տեսնել ու հետո համայն աշխարհին պատմել ճշմարտությունը: Ես կարծում եմ, որ դու պետք է մեկնես...

Նույն օրը Խանզադյանը վերադարձավ Երեւան: Ես մնացի Արարատում: Շարունակում էի աշխատել «Վերածննդի» ծրագրով, սա-



ՊՈԵԶԻԱ

Հերթական անգամ «աշխի ընկան»

Մեր պաշտոնական մամուլի ծառայությունները հերթական անգամ «աչքի ընկան»: Ուրբաթ երեկոյան, երբ հայտնի դարձավ մեծ գրող Սերո Խանզադյանի մահվան մասին լուրը, կարչատեի մամուլի գրասենյակը բարեհաճեց տալ միայն պաշտոնական «ՀՀ»-ին ու հեռուստատեսությանը, կարծես թե մնացած թերթերի ընթերցողներն իրավունք չունեին իմանալու դրա մասին: Հերթական անգամ խտրականություն է դրվում ՕԼՄ-ների միջեւ, որի հետեւանքով «Ազգ»-ը, որ սեփական աղբյուրների միջոցով տեղեկացել էր գրողի ծանր հիվանդ լինելու մասին, հայտնվեց անհարմար վիճակում:

Ուստի մեր ընթերցողների վրդովմունքն ու դժգոհությունն ուղղում ենք ՀՀ կառավարության մամուլի ծառայությանը:

Ի դեմ, բարի խորհուրդ մահագրի կազմած արհեստավարժներին. այդ ժանրի գրությունները չեն ստորագրում նույնիսկ եթե դրա հեղինակները ՀՀ կառավարության մամուլի գրասենյակից են:

«ԱԶԳ»

ԳՈՒՅԺ

Արամ Անանյան



Հայաստանի թատերական կյանքը գավալի կորուստ կրեց՝ հանկարծամահ եղավ Երեւանի քաղաքաթատերական Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի տաղանդավոր արտիստ Արամ Անանյանը, երբ ընդամենը 39 տարեկան էր: Դեռեւս Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ուսանող, նա մասնակցում է Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի ներկայացումներին, իսկ 1982 թվականից հիմնավորվում Դրամատիկական թատրոնում՝ այստեղ արդելով ստեղծագործական վերելքի տարիներ եւ ձեւավորելով իր ինքնահատուկ, շատերից տարբեր խաղաոճը:

Շատ դերեր չխաղաց, դրանք սպասվում էին, սակայն ինչ էլ խաղաց՝ թատերարվեստի բարձրագույն արտահայտություններ էին. երիտասարդ բանաստեղծ («Անվերջ վերադարձ»), Կասիոս («Հուլիոս Կեսար»), Մերկուտիո («Ռոմեո եւ Ջուլիետա»), Քիոար («Պաղտասար աղբար), Վիրտուոզ («Ավտոբուս»), Անդրիուս («Բեատրիչե»), Հերոստրատ («Մոռանալ Հերոստրատին»):

Արամ Անանյանը բուռն զգացմունքներ արտահայտող, մտածող արտիստի հիանալի օրինակ էր, իսկապես՝ արտիստ եւ ոչ դերասան՝ դեր ասող, նա ուներ արվեստագետի ներաշխարհ, թատերական հայացք, որ համահունչ էր Դրամատիկականի եւ ժամանակակից թատրոնի զարգացման միտումներին: Ինքն էլ այդ միտումները կրողներից էր եւ արտահայտիչը: Իր տարիքից զգալիորեն հասուն եղավ վարպետությամբ, արտիստիզմով, թատրոնի եւ զուգահեռ արվեստների ներգգացողությամբ, գիտեր, ինչ է ուզում եւ ինչից է հրաժարվում, մանավանդ գիտեր թատրոնի լեզուն եւ այդ լեզվով խոսում էր այնպես, ասես դա իր մայրենին լիներ: Եվ այդպես էլ կար՝ նրա մայրենին թատրոնն էր, Աստծո նրան շնորհված ոսկին, որը դրամատիկական թատրոնում մշակվեց՝ փայլելու ամբողջ շքեղությամբ:

Ժողովրդական չէր կոչումով, բայց արդեն ժողովրդականություն էր վայելում, հատկապես երիտասարդության շրջանակում, հանդիսատեսը Դրամատիկական թատրոն էր գալիս նաեւ նրան տեսնելու համար, որովհետեւ նա խոսում էր իր տագնապներից: Ով մեկ անգամ վայելել է Արամի Կասիոսի եւ Մերկուտիոյի ներկայությունը, երբեք չի մոռանա նրան: Նա շատերի համար դարձավ հոգեւոր ու ոգեղեն հարստություն:

Արամ Անանյանը բացառիկ գեղեցիկ տղամարդ էր եւ անհնարին էր նրան չնկատել փողոցում՝ եւ այլուր, նրա աչքերն արտացոլում էին ներքին մարդուն եւ արտիստին: Սակայն ավելի գեղեցիկ էր բեմում: Ափսո՞ս... այդ գեղեցկությունն այլեւս բեմ չի ելնելու, այսուհետեւ կլինի մեզանից հեռու, բայց միշտ մեզ հետ՝ իբրեւ հմայիչ թատերական տեսիլք:

ԵՐԵՎԱՆԻ ՀՐԱՇՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Հայ-ուկրաինական պատմամշակութային կապեր

Հարստանում են երկու ժողովուրդների գրական փոխառնչությունները

Ավելի քան 900 տարվա պատմություն ունի հայ եւ ուկրաինացի ժողովուրդների բարեկամությունը, եւ այսօր անկախ հանրապետությունների ջանքերով այն ավելի ամրապնդվում եւ նոր իմաստ ու բովանդակություն է ստանում: Այս ամենը լավագույն ձեւով արտահայտված է հայերեն եւ ուկրաիներեն լեզուներով գրքերում ու պարբերականներում:

Շուրջ երեք հարյուր ցուցանմուշներից է բաղկացած Հայաստանի Ազգային գրադարանում կազմակերպված ընդարձակ ցուցահանդեսը, որի հեղինակներն են մայր գրադարանն ու Հայաստանում Ուկրաինայի դեսպանությունը:

Մի շարք բաժինների՝ «Գրական կապեր», «Գեղարվեստական գրականություն», «Ուսումնասիրություններ», «Արվեստ» եւ այլն, նյութերը պատմում են երկու եղբայր ժողովուրդների անցած հարյուրամյակների կյանքի ուղին: Ուկրաինայում բնակվող հայերի կենսագրության վկաներն են հայկական եկեղեցիներն ու թաղամասերը, աշխարհագրական անունները: Ուկրաինայի դռները միշտ բաց են եղել հայերի համար, որոնք ունեցել են լիիրավ իրավունքներ եւ իրենց գործով նպաստել այդ երկրի տնտեսության ու մշակույթի զարգացմանը: «Երբ շփվում ես ուկրաինացի մարդկանց հետ, թվում է, թե շփվում ես անարատ ազնվությանը, հենց իր մարդ արարածի առաքինությունների հետ», գրում է Սերո Խանզադյանը:

Պ. Տիչինա

Ցուցահանդեսի բացմանը խոսք ասացին գրադարանի տնօրեն Գ. Տեր-Վարդանյանը, մշակույթի նախարար Ռ. Շառոյանը, Հայաստանում Ուկրաինայի դեսպան Ալ. Բոժկոն, պատմաբան Վ. Գրիգորյանը, թարգմանիչ, Ուկրաինայի մշակույթի վաստակավոր գործիչ Գ. Թաքոյանը: Բանաստեղծ Լ. Միրիջանյանը ունկնդիրներին ներկայացրեց Վլադիմիր Սոսյուրայի «Սիրեք Ուկրաինա» բանաստեղծության իր թարգմանությունը: Ելույթ ունեցավ Ուկրաինայի համայնքի «Դնիպրո» երգչախումբը:

Նշենք նաեւ, որ Ուկրաինայում Հայաստանի դեսպան Հրաչիկ Միլվանյանի հայրը երկար տարիներ աշխատել է Ազգային գրադարանում, եւ ի թիվս այլ աշխատանքների կազմել է նաեւ «Համաշխարհային գրականության հայ թարգմանությունները» մատենագիտությունը, որը, ցավոք, ցուցադրված չէր: Ցուցահանդեսում ցանկալի էր տեսնել Պ. Տիչինայի, Ս. Ռիլսկու «Հայաստանի եւ հայ մշակույթի մասին», Մարտիրոս Ղրիմեցու «Բանաստեղծություններ», Վ. Միխայելյանի «Ղրիմի հայ գաղութի պատմություն», «Ուկրաինա հարազատ», «Սովետահայ թարգմանական գրականությունը 1920-1980» գրքերը, ՀԱԳ-ի 7-րդ եւ 12-րդ հատորները, պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանի հայերեն եւ ռուսերեն աշխատությունները եւ այլն: Ցավալի է, որ ցուցահանդեսը չունի խորագիր:

ՏԳՈՅՑ ՀՈՒՆԱՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Եա հեռատեսորեն կանխազգում էր աղետը

Երեկ Երեւանը, ամբողջ Հայաստանը, ողջ հայությունը հրաժեշտ տվեց մեծ գրողին: Նա գնաց միանալու մեր մյուս մեծերին անմահության մեջ: Դեռ շատ կգրվի նրա ստեղծագործական վաստակի մասին: Նրա ժամանակակիցները կգրեն նաեւ ազգային տագնապների ու ներքին խմորումների նկատմամբ նրա ներքին սուր զգացողության մասին, դա լինի դարաբաղյան շարժում, Բեյրութի հայության ճակատագիր, թե խորհրդային պայմաններում ազգային արժանապատվությունը բարձր պահելու անհրաժեշտություն: Ստորեւ ներկայացնում ենք հատված նվիրված Սերո Խանզադյանին, Հորի Բալայանի «Օջախ» գրքից:

Կեսգիշերին արթնացա հեռախոսի երկար զանգից: Իսկույն գլխի ընկա, որ միջքաղաքային է: Վախեցա: Չլինի տանը բան է պատահել: Տնից չէին զանգահարում: Բայց զանգահարում էր ինձ շատ հարազատ մարդ՝ Սերո Խանզադյանը: Նա ասաց, որ «Ավանգարդ»-ում կարդում է իմ ռեպորտաժները, ուշադրությամբ հետեւում է «Արշավի ընթացք»-ին: Նա ինձ՝ դարաբաղցուս հետ խոսում էր զանգեզուրյան-դարաբաղյան բարբառով: Իսկ հետո կարգադրեց. «Վաղն անպայման արի Երեւան: Շտապ գործ կա»: Ու առաջին անգամ իմ կյանքում ես չէ, որ Թուրքիան ԱՍՆ-ին թույլ է տվել ՍՍՀՄ-ի սահմանին մոտ ռազմական բազաներ ունենալ, այլ այն, որ նա երբեք անհատույց բան չի անում: Ես համոզված եմ, որ նրանք առուծախ են արել: Թուրքիան ասել է. ես քեզ ռազմական բազաների տեղ եմ տվել, դու էլ պիտի ամեն ինչ անես, օգտվելով իրավիճակից, որ վերանա Լիբանանի հայկական համայնքը»:

Ամբողջ աշխարհը գիտե, որ այդ համայնքը ասես ժամանակակից թուրք գաղափարախոսների աչքի փուշը լինի, որոնք ամեն կերպ ուզում են խեղաթյուրել պատմությունը եւ արդարանալ համաշխարհային հասարակության առաջ հայկական կոտորածների համար:

Լիբանանի հայ գաղութն այսօր, իր հայկական դպրոցներով ու համալսարանով, իր լրագրերով ու գրքերով ամեն օր, ամեն ժամ արդար դասասան է տեսնում մարդասպանների հետ: Ամբողջ աշխարհին թույլ չի տալիս մոռանա մի ամբողջ ժողովրդի ահավոր ողբերգության մասին, որ թուրք գազանների մեղքով կործանման եզրին էր հասել հազար ինը հարյուր տասնհինգ թվականին:

Ես լսում էի Սերո Խանզադյանին, բայց չէի կարողանում ըմբռնել ինձ մոտ գալու նրա հիմնական նպատակը: Եվ խորաթափանց գրողը, ասես նկատելով մեր մեջ, ասաց. «Այստեղ հարցն այն մեծությունն է: Չեմ կարող խախտել ավանդույթը: Շատ հիշ է մնացել: Շուտով Երեւան կվերադառնամ»: Դեռ խոսքս չէի վերջացրել, երբ նա ընդհատեց ինձ. «Ուրեմն վաղը ես կգամ: Ինձ սպասիր հյուրանոցում»:

_Այլեւս չկարողացա հնել մինչեւ առավոտ: Մտածում էի Սերո Խանզադյանի զանգի մասին: Մտածում էի նրա մասին: Մտածում էի ջերմությամբ եւ կարոտով: Եվ ընդհանրապես կարոտել էի հարազատներիս ու ընկերներիս, որոշիսի, բարեբախտաբար, այսօր շատ ունեմ Երեւանում: Չէ՞ որ ընդամենը մի քանի տարի առաջ ծանոթներ չունեի Երեւանում, իսկ այսօր ընկերներ, բարեկամներ ունեմ, շատ բարեկամներ: Մի ամբողջ հարստություն: Եվ իմ այդ հարստության, իմ այդ մեծ նվաճումի մեջ առանձնակի տեղ է գրավում Սերո Խանզադյանը: Ու առավոտյան նա պիտի գա Արարատ: Ուրեմն շատ լուրջ բան է պատահել, քանի որ նա ինքն է գալիս այստեղ:

Իսկապես լուրջ բան էր պատահել: Սամուլում արդեն տագնապալի հաղորդումներ էին հայտնվում Լիբանանի հայկական համայնքում տեղի ունեցող զրոսակացիաների մասին: Թվում էր, որ դա անստասելի չպիտի լիներ՝ մի քանի տարի այնտեղ պատերազմ է: Իսկ Լիբանանում կա հայկական համայնք, որը, բնականաբար, նույնպես պետք է տուժի պատերազմից: Սակայն Խանզադյանը խոսում էր այլ բանի մասին: Նա ասես կանխազգում էր, թե ինչ կարող էր տեղի ունենալ այնտեղ:

Իմանալով, որ Թուրքիան ԱՍՆ-ին թույլ է տվել ռազմական բազաներ ստեղծել իր տարածքում, հայ գրողն ասաց. «Այստեղ հարցն այն է, որ Թուրքիան ԱՍՆ-ին թույլ է տվել ՍՍՀՄ-ի սահմանին մոտ ռազմական բազաներ ունենալ, այլ այն, որ նա երբեք անհատույց բան չի անում: Ես համոզված եմ, որ նրանք առուծախ են արել: Թուրքիան ասել է. ես քեզ ռազմական բազաների տեղ եմ տվել, դու էլ պիտի ամեն ինչ անես, օգտվելով իրավիճակից, որ վերանա Լիբանանի հայկական համայնքը»:

Ամբողջ աշխարհը գիտե, որ այդ համայնքը ասես ժամանակակից թուրք գաղափարախոսների աչքի փուշը լինի, որոնք ամեն կերպ ուզում են խեղաթյուրել պատմությունը եւ արդարանալ համաշխարհային հասարակության առաջ հայկական կոտորածների համար:

Լիբանանի հայ գաղութն այսօր, իր հայկական դպրոցներով ու համալսարանով, իր լրագրերով ու գրքերով ամեն օր, ամեն ժամ արդար դասասան է տեսնում մարդասպանների հետ: Ամբողջ աշխարհին թույլ չի տալիս մոռանա մի ամբողջ ժողովրդի ահավոր ողբերգության մասին, որ թուրք գազանների մեղքով կործանման եզրին էր հասել հազար ինը հարյուր տասնհինգ թվականին:

Ես լսում էի Սերո Խանզադյանին, բայց չէի կարողանում ըմբռնել ինձ մոտ գալու նրա հիմնական նպատակը: Եվ խորաթափանց գրողը, ասես նկատելով մեր մեջ, ասաց.

- Ես կարծում եմ, որ մեր գրողներից մեկնումեկը պետք է մեկնի Լիբանան: Կրկնում եմ, զգում եմ, շատ շուտով այնտեղ հավերժարդար կտեսնեն հայ համայնքի հետ, որը աշխարհը գիտե, չի ուզում խառնվել եղբայրասպան պատերազմին: Պետք է ամեն ինչ աչքով տեսնել ու հետո համայն աշխարհին պատմել ճշմարտությունը: Ես կարծում եմ, որ դու պետք է մեկնես...

Նույն օրը Խանզադյանը վերադարձավ Երեւան: Ես մնացի Արարատում: Շարունակում էի աշխատել «Վերածննդի» ծրագրով, սակայն անընդհատ մտածում էի Խանզադյանի այցելության մասին: Եվ, առաջ ընկնելով իրադարձություններից, պետք է ասեմ, որ, դժբախտաբար, իրականացան իմաստուն գրողի կանխագուշակումները: Արարատի ավարտից մեկ ամիս հետո աշխարհն իմացավ, որ Լիբանանի հայ համայնքը դարձավ հրեշավոր տեռորի զոհ: Եվ ես մեկնեցի Բեյրութ: Սեփական աչքովս տեսա հայոց ողբերգությունը: Վերադառնալով՝ գիրք գրեցի, որը կոչվեց «Երկու կրակի մեջ»: Եվ անընդհատ մտածում էի ավագ ընկերոջս, մեծանուն գրողի մասին, որը հեռատեսորեն կանխազգում էր աղետը:

ՀՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

ԳՈՒՅԺ

Արամ Անանյան

Հայաստանի թատերական կյանքը ցավալի կորուստ կրեց՝ հանկարծամահ եղավ Երեւանի քաղաքապետարանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի տաղանդավոր արտիստ Արամ Անանյանը, երբ ընդամենը 39 տարեկան էր: Դեռեւս Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ուսանող, նա մասնակցում է Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի ներկայացումներին, իսկ 1982 թվականից հիմնավորվում Դրամատիկական թատրոնում՝ այստեղ աղրելով ստեղծագործական վերելքի տարիներ եւ ձեւավորելով իր ինքնահատուկ, շատերից տարբեր խաղաոճը:

Շատ դերեր չխաղաց, դրանք սպասվում էին, սակայն ինչ էլ խաղաց՝ թատերաշրջանի բարձրագույն արտահայտություններ էին. երիտասարդ բանաստեղծ («Անվերջ վերադարձ»), Կասիոս («Հուլիոս Կեսար»), Մերկուտիո («Ռոմեո եւ Ջուլիետ»), Քիդար («Պաղտասար աղբար), Փիրուզ («Ավտոբուս»), Անդրիուս («Բեատրիչե»), Հերոստրատ («Մոռանալ Հերոստրատին»):

Արամ Անանյանը բուռն զգացմունքներ արտահայտող, մտածող արտիստի հիանալի օրինակ էր, իսկապես՝ արտիստ եւ ոչ դերասան՝ դեր ասող, նա ուներ արվեստագետի ներաշխարհ, թատերական հայացք, որ համահունչ էր Դրամատիկականի եւ ժամանակակից թատրոնի զարգացման միտումներին: Ինքն էլ այդ միտումները կրողներից էր եւ արտահայտիչը: Իր տարիքից զգալիորեն հասուն եղավ վարպետությամբ, արտիստիզմով, թատրոնի եւ զուգահեռ արվեստների ներգգացողությամբ, գիտեր, ինչ է ուզում եւ ինչից է հրաժարվում, մանավանդ գիտեր թատրոնի լեզուն եւ այդ լեզվով խոսում էր այնպես, ասես դա իր մայրենին լիներ: Եվ այդպես էլ կար՝ նրա մայրենին թատրոնն էր, Աստծո նրան շնորհված ոսկին, որը դրամատիկական թատրոնում մշակվեց՝ փայլելու ամբողջ շեղությամբ:

Ժողովրդական չէր կոչումով, բայց արդեն ժողովրդականություն էր վայելում, հատկապես երիտասարդության շրջանակում, հանդիսատեսը Դրամատիկական թատրոն էր գալիս նաեւ նրան տեսնելու համար, որովհետեւ նա խոսում էր իր տագնապներից: Ով մեկ անգամ վայելել է Արամի Կասիոսի եւ Մերկուտիոյի ներկայությունը, երբեք չի մոռանա նրան: Նա շատերի համար դարձավ հոգեւոր ու ոգեղեն հարստություն:

Արամ Անանյանը բացառիկ գեղեցիկ տղամարդ էր եւ անհնարին էր նրան չնկատել փողոցում՝ եւ այլուր, նրա աչքերն արտացոլում էին ներքին մարդուն եւ արտիստին: Սակայն ավելի գեղեցիկ էր բեմում: Ափսո՜ս... այդ գեղեցկությունն այլեւս բեմ չի ելնելու, այսուհետեւ կլինի մեզանից հեռու, բայց միշտ մեզ հետ՝ իբրեւ հմայիչ թատերական տեսիլք:

ԵՐԵՎԱՆԻ ՀՐԱՇՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Հայ-ուկրաինական պատմամշակութային կապեր

Հարստանում են երկու ժողովուրդների գրական փոխառնչությունները

Ավելի քան 900 տարվա պատմություն ունի հայ եւ ուկրաինացի ժողովուրդների բարեկամությունը, եւ այսօր անկախ հանրապետությունների ջանքերով այն ավելի ամրապնդվում եւ նոր իմաստ ու բովանդակություն է ստանում: Այս ամենը լավագույն ձեւով արտահայտված է հայերեն եւ ուկրաիներեն լեզուներով գրքերում ու պարբերականներում:

Շուրջ երեք հարյուր ցուցանմուշներից է բաղկացած Հայաստանի Ազգային գրադարանում կազմակերպված ընդարձակ ցուցահանդեսը, որի հեղինակներն են մայր գրադարանն ու Հայաստանում Ուկրաինայի դեսպանությունը:

Մի շարք բաժինների՝ «Գրական կապեր», «Գեղարվեստական գրականություն», «Ուսումնասիրություններ», «Արվեստ» եւ այլն, նյութերը պատմում են երկու եղբայր ժողովուրդների անցած հարյուրամյակների կյանքի ուղին: Ուկրաինայում բնակվող հայերի կենսագրության վկաներն են հայկական եկեղեցիներն ու թաղամասերը, աշխարհագրական անունները: Ուկրաինայի դռները միշտ բաց են եղել հայերի համար, որոնք ունեցել են լիիրավ իրավունքներ եւ իրենց գործով նպաստել այդ երկրի տնտեսության ու մշակույթի զարգացմանը: «Երբ շփվում ես ուկրաինացի մարդկանց հետ, թվում է, թե շփվում ես անարատ ազնվությանը, հենց իր՝ մարդ արարածի առաքինությունների հետ», գրում է Սերո Խանզադյանը:

Պ. Տիչինա

Ցուցահանդեսի բացմանը խոսք ասացին գրադարանի տնօրեն Գ. Տեր-Վարդանյանը, մշակույթի նախարար Ռ. Նառոյանը, Հայաստանում Ուկրաինայի դեսպան Ալ. Բոժկոն, պատմաբան Վ. Գրիգորյանը, թարգմանիչ, Ուկրաինայի մշակույթի վաստակավոր գործիչ Գ. Թաքոսյանը: Բանաստեղծ Լ. Միրիջանյանը ունկնդիրներին ներկայացրեց Վլադիմիր Սոսյուրայի «Փիրեվ Ուկրաինան» բանաստեղծության իր թարգմանությունը: Ելույթ ունեցավ Ուկրաինայի համայնքի «Դնիպրո» երգչախումբը:

Նշենք նաեւ, որ Ուկրաինայում Հայաստանի դեսպան Հրաչիկ Միլվանյանի հայրը երկար տարիներ աշխատել է Ազգային գրադարանում, եւ ի թիվս այլ աշխատանքների կազմել է նաեւ «Համաշխարհային գրականության հայ թարգմանությունները» մատենագիտությունը, որը, ցավոք, ցուցադրված չէր: Ցուցահանդեսում ցանկալի էր տեսնել Պ. Տիչինայի, Ս. Ոիլսկու «Հայաստանի եւ հայ մշակույթի մասին», Մարտիրոս Գրիմեցու «Բանաստեղծություններ», Վ. Միխայելյանի «Գրիմի հայ գաղութի պատմություն», «Ուկրաինա հարազատ», «Սովետահայ թարգմանական գրականությունը 1920-1980» գրքերը, ՀԱՅ-ի 7-րդ եւ 12-րդ հատորները, պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանի հայերեն եւ ռուսերեն աշխատությունները եւ այլն: Ցավալի է, որ ցուցահանդեսը չունի խորագիր:

ՀԵՐԱՑՍ ՀՈՌԵՄՅԱՆ

ՌԵՊԼԻԿ

Հերթական անգամ «աչքի ընկան»

Մեր պաշտոնական մամուլի ծառայությունները հերթական անգամ «աչքի ընկան»: Ուրբաթ երեկոյան, երբ հայտնի դարձավ մեծ գրող Սերո Խանզադյանի մահվան մասին լուրը, կարչաղեցի մամուլի գրասենյակը բարեհաճեց տալ միայն պաշտոնական «ՀՀ»-ին ու հեռուստատեսությանը, կարծես թե մնացած թերթերի ընթերցողներն իրավունք չունեին իմանալու դրա մասին: Հերթական անգամ խտրականություն է դրվում ՕԼՍ-ների միջեւ, որի հետեւանքով «Ազգ»-ը, որ սեփական աղբյուրների միջոցով տեղեկացել էր գրողի ծանր հիվանդ լինելու մասին, հայտնվեց անհարմար վիճակում:

Ուստի մեր ընթերցողների վրդովմունքն ու դժգոհությունն ուղղում ենք ՀՀ կառավարության մամուլի ծառայությանը:

Ի դեպ, բարի խորհուրդ մահազդը կազմած արհեստավարժներին, այդ ժանրի գրությունները չեն ստորագրում նույնիսկ եթե դրա հեղինակները ՀՀ կառավարության մամուլի գրասենյակից են:

«ԱԶԳ»

digitised by A.R.A.R.@

ՀԱՍԱՐՈՍ

Վարչապետ այցելեց Արմավիրի մարզ

Մեզ ջո՞ւր է պետք, ջո՞ւր. խառակերացի տարեց ուսուցիչ Անուշավան Գասպարյանի այս խոսքերն Արմավիրի մարզի նախկին Բաղրամյանի շրջանի բնակիչների կոչն է՝ ուղղված Հայաստանի իշխանություններին: Այդ խոսքերը, համարյա առանց փոփոխության, կիրակի օրը բազմիցս լսեց հանրապետության վարչապետ Արմեն Դարբինյանը, որը մեկնել էր այս շրջան՝ տեղում ծանոթանալու գյուղացու հոգսերին ու ցավերին: Դա կառավարության երիտասարդ նախագահի առաջին ուղեւորությունն էր Հայաստանի մարզ, կենսագործելով ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նախընտրական խոստումներից մեկը՝ հոգալ դժվարությունների հետ դեմ առ դեմ հայտնված գյուղացու խնդիրները: Իսկ խնդիրները շատ ու շատ էին...

Այցի մասին պատմող Տիգրան Լիլոյանի նյութը կարդացեք վաղվա մեր համարում:

Երեւանում տնտեսավարող բոլոր սուբյեկտները կունենան ջրաչափեր

ԵՐԵՎԱՆ, 29 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ: Հունիսի 29-ին Երեւանի քաղաքապետ Սուրեն Աբրահամյանի վարած աշխատանքային խորհրդակցության ժամանակ քննարկվեցին մայրաքաղաքի ջրամատակարարմանը վերաբերող հարցեր: Երեւանի քաղաքապետարանի լրատվության եւ հասարակության հետ կապերի բաժնից հայտնեցին, որ քննարկվեցին Երեւանի մի շարք համայքները սնուցող ջրատարի աշխատանքի ժամանակավոր դադարեցման պատճառները, տեղեկացվեց՝ բացի բնակելի շենքերի բնակիչներից, տնտեսավարող բոլոր սուբյեկտների ջրաչափերի պարտադիր տեղադրման մասին:

Մասնակիցներին ներկայացվեցին առուտրի, սպասարկումների եւ տրանսպորտի վարչության պետ Լեւոն Հարությունյանը եւ «Կանաչապատման» ձեռնարկության տնօրեն Ալֆրեդ Ներսիսյանը:

Թուրքիա. Բազմաթիվ զոհեր երկրաշարժից

ԵՐԵՎԱՆ, 29 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ: Հունիսի 27-ին Թուրքիայի հարավում տեղի ունեցած երկրաշարժի զոհերի թիվը անցել է 120-ից: Ավելի քան մեկ ու կես հազար մարդ է անհետ կորել: Ջեյհան քաղաքում երկրաշարժի էպիկենտրոնում, ցնցումների ուժգնությունն կազմել է 6,3 ուժգնություն ըստ Ռիխտերի բաց սանդղակի: Ջեյհանում եւ Թուրքիայի 4-րդ խոշոր քաղաք Ադանայում վերջին երկու օրում արձանագրվել է ավելի քան 70 հետերկրաշարժային ցնցում: Քանդվել են բազմաթիվ խարխուլ տներ: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, 1903 թ.-ից ի վեր Թուրքիայի այդ շրջանում տեղի է ունեցել 76 երկրաշարժ եւ զոհվել է 60 հազարից ավելի մարդ:



ՌՈՒՍԵՐ-ԱՐՄԵՆՐԵՍ

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (ԲՀԻՕՀՀՄ)

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ ԾՐԱԳԻՐ

ԲՀԻՕՀՀՄ-ը հայտարարում է մրցույթ սույն թվականի հոկտեմբերին Մեծ Բրիտանիայում անցկացվելիք թատերական գործիչների գործնական դասընթացներին մասնակցելու համար: Այն կազմակերպում է Բուդապեշտի Բաց հասարակության ինստիտուտը Բրիտանական խորհրդի համագործակցությամբ՝ հատուկ կովկասյան հանրապետությունների համար: Հայաստանին տրվելու է առնվազն 5 տեղ: Նախապատվությունը տրվելու է մինչեւ 35 տարեկաններին: Անգլերենի վարժ իմացությունը պարտադիր է: Մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն ինքնակենսագրություն, նպատակի հիմնավորում եւ երաշխավորագիր (անգլերեն լեզվով):

Դիմումներն ընդունվում են մինչեւ 1998 թ. օգոստոսի 28-ը հետեւյալ հասցեով՝

Երեւան 19, Այգեձորի 53բ, հեռ. 272119, 271713

Հեռ/ֆաքս 151 088

Դիմել Արծվի Բախչինյանին

«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՆՏՐՈՒՄ Է

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Գործունեության շրջանակը.

- ճարտարագետ-գյուղատնտես կամ դրա համարժեքը
- գինեգործական խորը գիտելիքներ
- աշխատանքային փորձ, շփում գյուղատնտեսների հետ
- ֆրանսերենի կամ անգլերենի իմացությունը ցանկալի է

Առաքելությունները.

- զարգացնել գործարանի եւ խաղողագործների միջեւ կապերը
- խորհուրդներ տալ եւ աշխուժացնել խաղողագործներին արտադրանքի արդյունավետությունը եւ որակը բարձրացնելու նպատակով
- հետեւել խաղողի գնման պայմանագրերին
- մասնակցել այգիների եւ դրա մատակարարմանը գործարանին

Դիմել Երեւանի կոնյակի գործարան, 2 Իսակովի պող. 375082 Երեւան

Հեռախոս 524456 (քարտուղարություն)

«Վան-1» ՓԲԸ առաջարկում է պեմզաբլոկ, միջնորմային սալիկներ եւ ասիճաններ մատչելի գներով: Ընդունվում են պատվերներ: Փոխադրումն ապահովվում է:

Հասցեն՝ Արցախի 75

Հեռ. 47-00-06

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնկակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայ գործարարների ընկերություն» ԲԲԸ-ն նախնական քննարկման համար ընդունում է արտադրական ծրագրեր համատեղ ընկերություն հիմնելու նպատակով՝ մինչեւ 500 հազար ԱՄՆ դոլար կանոնադրական հիմնադրամով: Ծրագիրը ներկայացնող կողմը պետք է ունենա մինչեւ 250 հազար ԱՄՆ դոլարին համարժեք ներդրում կատարելու հնարավորություն:

Ծրագիրը ներկայացնել հետեւյալ հասցեով՝ Տիգրան Մեծի 4:

Հեռ. 52-05-89

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

մեկ սենյականոց բնակարան Նորքի IV զանգվածում:

Հեռ.՝ 64-88-85, 64-69-49, 63-03-47

VACANCY ANNOUNCEMENT

The International Committee of the Red Cross (ICRC) is seeking applications for the post of a medical field officer for a tuberculosis programme in Armenian prisons.

Requirements:
-graduated medical doctor (experience in tuberculosis/epidemiology desirable);
-medical license to practise;
-fluency in spoken and written English, Russian, Armenian;
-computer skills;
-driving license.

Please provide detailed CV to ICRC Administration, Orbeli str.41, Yerevan

Phones: 273152, 269339, 262903; Gvt line: 5048.

Deadline is Monday, July 13.

Հայաստանի բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ

Արեւելք-արեւելք ծրագիր

հայտարարվում է մրցույթ

«Առողջապահական համակարգի կառավարումն անցման շրջանում» թեմայով սեմինարին մասնակցելու կարգակցությամբ, որը կկայանա հուլիսի 13-ից հուլիսի 18-ը Կիեւում, Ուկրաինա:

Սեմինարի նպատակն է հաղորդել նոր գիտելիքներ առողջապահական համակարգի կառավարման եւ ընտանեկան բժիշկների գործունեության մասին՝ այսպիսով նպաստելով տարածաշրջանում բարեփոխումների անցկացմանը:

Սեմինարին կարող են մասնակցել առողջապահական համակարգի կառավարմամբ զբաղվող մինչեւ 45 տարեկան մասնագետներ:

Աշխատանքային լեզուներն են ռուսերենը եւ անգլերենը:

Անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը ռուսերեն կամ անգլերեն լեզուներով.

- ինքնակենսագրություն (CV),
- երաշխավորագիր,
- հիմնավորում, թե որքանով միջոցառումը կնպաստի մասնակցի հետագա գործունեությանը:

Դիմումներն ընդունվում են մինչեւ 1998 թ. հուլիսի 6-ը:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ հետեւյալ հասցեով՝

Երեւան 19, Այգեձորի 53բ
Հեռ. 272119, 271713, 271719

Հայաստանի բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ

Արեւելք-արեւելք ծրագիր

հայտարարվում է մրցույթ

«Ոչ պետական մշակութային նախագծերի կառավարում» թեմայով ամառային դպրոցին մասնակցելու կարգակցությամբ, որը կկայանա հուլիսի 20-29-ը, Մոսկվայում, Ռուսաստանի Ֆեդերացիա:

Դպրոցն առաջարկում է տեսական դասընթաց կատարողական արվեստների կառավարման ոլորտում, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս երիտասարդ մենեջերներին ներկայացնել իրենց նախագծերը եւ քննարկել դրանք:

Սեմինարին կարող են մասնակցել կատարողական արվեստների կառավարման հիմնախնդիրներով զբաղվող երիտասարդ մասնագետներ:

Աշխատանքային լեզուն ռուսերենն է:

Անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը ռուսերեն լեզվով.

- ինքնակենսագրություն (CV),
- երաշխավորագիր,
- հիմնավորում, թե որքանով միջոցառումը կնպաստի մասնակցի հետագա գործունեությանը,
- դիմողի կողմից իրականացված որեւէ նախագծի նկարագրություն:

Դիմումներն ընդունվում են մինչեւ 1998 թ. հուլիսի 6-ը:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ հետեւյալ հասցեով՝

Երեւան 19, Այգեձորի 53բ
Հեռ. 272119, 271719, 271713

Հայաստանի բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ

Արեւելք-արեւելք ծրագիր

հայտարարվում է մրցույթ

«Առասպելներ, լեգենդներ, կրոն եւ էթնոս» թեմայով ամառային դպրոցին մասնակցելու կարգակցությամբ, որը կկայանա հուլիսի 25-ից օգոստոսի 9-ը, Հարավսլավիայի Զաբլյակ քաղաքում:

Սեմինարի նպատակն է հավաքել երիտասարդ ուսանողներ՝ փոխանակելու կարծիքներ տարբեր դավանանքների պատկանող ազգությունների համագործակցության, հանդուրժողականության, փոխըմբռնման եւ խաղաղ գոյակցման շուրջ:

Աշխատանքային լեզուներն են ռուսերենը եւ անգլերենը:

Անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը ռուսերեն կամ անգլերեն լեզուներով.

- ինքնակենսագրություն (CV),
- երաշխավորագիր,
- հիմնավորում, թե որքանով միջոցառումը կնպաստի մասնակցի հետագա գործունեությանը:

Դիմումներն ընդունվում են մինչեւ 1998 թ. հուլիսի 6-ը:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար դիմել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ հետեւյալ հասցեով՝

Երեւան 19, Այգեձորի 53բ
Հեռ. 272119, 271719, 271713

«ԲԺԻՇԿՆԵՐ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ»

Ֆրանսիական կազմակերպությունը մաքսաբանության եւ ՍԵՓՀ բժշկագիտական կենտրոնի հետ համատեղ հիմնել են սեռավարակների (վեներական հիվանդությունների) կանխարգելման եւ սեռական հարցերի տեղեկատվական ծառայություն, որտեղ հմուտ բժիշկները կօգնեն ձեզ հաղթահարելու մտահոգությունը՝ պատասխանելով ձեզ հուզող հարցերին եւ գաղտնիությունն ապահովելով:

Զանգահարեք եւ այդպիսով խուսափեք բարդություններից՝

Երեւան, հեռ. 56-26-89 (Տիգրան Մեծի 36), Գյումրի, հեռ. 2-24-88 (Օրջոնիկիձեի 187)

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիր 69149. Պատվեր 852 Տպաքանակը՝ 3500 Ստորագրված է տպագրության՝ 29. 05. 1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@